


ԱՋԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Ուսումնասիրություն



Ուսումնասիրությունն իրականացվել է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության «Ապահով գինվորներ՝ անվտանգ Հայաստանին» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է նիդերլանդական PAX կազմակերպության աջակցությամբ:

Հեղինակներ՝

Դիանա Տեր-Ստեփանյան
Էդգար Խաչատրյան

Խմբագիր՝

Վահագն Անտոնյան



PEACE DIALOGUE

© 2015, «Խաղաղության երկխոսություն»
հասարակական կազմակերպություն,
Վանաձոր

ԱՋԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ Ուսումնասիրություն



Ուսումնասիրությունն իրականացվել է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության «Ապահով գինվորներ՝ անվտանգ Հայաստանին» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է նիդերլանդական PAX կազմակերպության աջակցությամբ:

Հեղինակներ՝

Դիանա Տեր-Ստեփանյան
Էդգար Խաչատրյան

Խմբագիր՝

Վահագն Անտոնյան



Բովանդակություն

	Հեղինակների կողմից - - - - -	6
	Ներածություն - - - - -	7
	Մեթոդաբանություն - - - - -	10
1.	Հայաստանի առաջնահերթությունները երիտասարդների աչքերով - - - - -	12
2.	Վստահություն պետական և ոչ պետական կառույցների նկատմամբ - - - - -	18
2.1	Զինված ուժերի նկատմամբ վերաբերմունքը և այլ հարցերի հետ կապը - - - - -	22
3.	Աշխարհաքաղաքական նախընտրություններ. անվտանգություն, թե՛ տնտեսական զարգացում - - -	27
3.1	ԵՏՄ և ԵՄ նախընտրությունները և այլ հարցերի հետ կապը - - - - -	35
4.	Անվտանգության և դրա մարտահրավերների մասին ընկալումները - - - - -	41
4.1	Հզոր բանակի տեսլականը - - - - -	45
4.2	Լեռնային Ղարաբաղի հիմնահարց և անվտանգություն - - - - -	55
5.	Մարդու իրավունքների արժեքը և սահմանների ընկալումը - - - - -	62
	Եզրակացություններ - - - - -	70

Հեղինակների կողմից

«Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպությունն արդեն շուրջ ութ տարի աշխատում է խաղաղության կառուցման և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտներում: Առաջնորդվելով «Մարդը՝ լիիրավ և պատասխանատու քաղաքացի» սկզբունքով՝ «ԽԵ»-ն կարևորում է այն գիտակցության ձևավորումը, ըստ որի՝ քաղաքացին ու իրավունքը բարձրագույն արժեքներ են: Դա է պատճառը, որ մարդու իրավունքների և ժողովրդավարական արժեքների նկատմամբ հարգանքի պատվաստումը կազմակերպության կարևոր ռազմավարական ուղղություններից է:

Հայաստանում իրավունքի գերակայության, սոցիալական արդարության, հասարակական և քաղաքական գործընթացներում քաղաքացիական ակտիվ մասնակցության ձգտելիս բազմիցս ենք բախվել մի խնդրի, որ քաղաքացին չի գիտակցում երկրում ընթացող քաղաքական և քաղաքացիական գործընթացներում իր դերի կարևորությունը: Այնպիսի տպավորություն է, որ մարդիկ հիմնականում հուսալքված, հիասթափված են, սպասում են՝ ապավինելով ինչ-որ այլ, հզոր ուժերի, որոնք օրերից մի օր պետք է բարի կամք դրսևորեն և դրական փոփոխություններ բերեն իրենց կյանքում:

Թվում է, թե շատ երևույթներ պետք է (հատկապես ազատության և անկախության առավել սուր պահանջումը ունեցող երիտասարդ սերնդի մոտ) ընդդիմանալու և անհանդուրժողականության դրսևորման պատճառ հանդիսանալին, սակայն շատերի աչքերում անարդարությունն ու բռնությունը, անպատժելիությունը, վախի մթնոլորտը, անօրինականությունը, կոռուպցիան վերածվել են սովորական, «թույլատրելիության սահմանը» չգերազանցող երևույթների:

Որո՞նք են նման դրսևորումների պատճառները, ինչ սոցիալական, տնտեսական և քաղաքական գործընթացներ են իրենց ազդեցությունը թողել նման անտարբերության կամ՝ ճակատագրապաշտական մոտեցումների ձևավորման վրա՝ փորձել ենք պարզել Հայաստանում բնակվող երիտասարդների շրջանում կատարված այս ուսումնասիրությամբ:

Վերջինիս ծանոթությունը հնարավորություն կտա որոշակի պատկերացում կազմել հարցված երիտասարդների ընկալումների հետո՝ երկրի զարգացման առաջնահերթություններին, առաջնային սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներին, անվտանգությանը, իրավական պաշտպանվածությանն առնչվող խնդիրներին և այլ շատ հարցերին վերաբերող:

Ուսումնասիրությունը հնարավորություն տվեց պարզելու նաև հարցվողների՝ պետության կարևորագույն ինստիտուտների նկատմամբ վստահության մակարդակը, Հայաստանի աշխարհաքաղաքական կուրսի ընտրությանը, ավտորիտարիզմին, ժողովրդավարական արժեքներին և շատ այլ հարցերին վերաբերող կարծիքները:

Հարկ է նշել նաև, որ ուսումնասիրության ընթացքում բարձրացվել և դիտարկվել են բազմաթիվ այլ հարցեր և հիմնախնդիրներ ևս, որոնք, սակայն, տեղ չեն գտել վերլուծության վերջնական զեկույցում, քանի որ հարցվողների կողմից այս հարցերին տված պատասխանների միջև կապի առկայությունը չի հաստատվել կոռելյացիայի գործակցի միջոցով: Սա ենթադրում է, որ այս պատասխանների միջև գոյություն ունեցող կապերը բացակայել են կամ եղել են շատ թույլ՝ բովանդակային կշիռ ներկայացնելու համար:

Ներածություն

Սովետական Միության փլուզումից ի վեր նախկին Սովետական հանրապետությունները լարված անցումային ժամանակաշրջան ապրեցին. շատերը դեռևս չկարգավորված խնդիրներ և հակամարտություններ ունեն միմյանց միջև: Սկսած 1990-ականներից մինչև օրս դեռևս չկարգավորված բռնի հակամարտությունների օջախներ կան այստեղ՝ Հայաստանի և Ադրբեջանի, Վրաստանի և Ռուսաստանի միջև, Ռուսաստանի ներքին հակամարտությունները Հյուսիսային Կովկասում և, բոլորովին վերջերս, Ուկրաինայի և Ռուսաստանի միջև ծագած հակամարտությունը:

1994 թ.-ին հրադադարի ռեժիմի կնքումից հետո Լեռնային Ղարաբաղի շուրջ հայերի և ադրբեջանցիների միջև ծագած հակամարտությունը թեև համարվում է «սառեցված», սակայն ղարաբաղա-ադրբեջանական շփման գծում և հայ-ադրբեջանական սահմանին լարվածության ու բռնությունների աճը (այդ թվում՝ քաղաքացիական անձանց նպատակաուղղված սպանությունները) լուրջ մտահոգության տեղիք են տալիս և, անշուշտ, իրենց հետքն են թողում թե՛ Ադրբեջանի, թե՛ Հայաստանի ներքին և արտաքին քաղաքական զարգացումների վրա:

Բռնի Միջազգային փոխակերպման կենտրոնի (BICC) կողմից յուրաքանչյուր տարի հրապարակվող «Գլոբալ միլիտարիզացիայի ինդեքսը» (Global Militarization Index¹) նկարագրում է տվյալ երկրի ռազմական ապարատի՝ հասարակությունում ունեցած հարաբերական նշանակությունն ու կարևորությունը: Այս տարի «Գլոբալ միլիտարիզացիայի ինդեքսը»-ում անդրադարձ եղավ Լեռնային Ղարաբաղի ձգձգվող հակամարտությանը: Ըստ Բռնի Միջազգային փոխակերպման ինստիտուտի՝ Եվրոպայի կազմի մեջ մտնող, միմյանց հարևան Հայաստանն ու Ադրբեջանը միլիտարիզացիայի շատ բարձր մակարդակ ունեն և վերջին տարիներին անընդհատ ընդարձակում են ռազմական ծախսերը: Հայաստանի ռազմական ծախսերը 2013թ.-ին հասել են 427 միլիոն ԱՄՆ դոլարի, իսկ Ադրբեջանի համապատասխան ծախսերը՝ 3.4 միլիարդի: Ծախսերը երկու երկրների ՀՆԱ-ի, համապատասխանաբար, 4 և 4.7 տոկոսն են կազմում, ինչը նրանց անվիճելի առաջատար է դարձնում Եվրոպայում:

Զեկույցում նշվում է նաև, որ նավթարդյունաբերական աճի շնորհիվ Ադրբեջանի իշխանությունները ռազմական ծախսերը ծածկելու համար ահռելի ռեսուրսների են տիրապետում: Ներքին համախառն արդյունքի կտրուկ աճի պայմաններում Բաքուն տարիների ընթացքում ավելի ինքնավստահ է դարձել և, այսպիսով, ուժի դիրքերից է փորձում

1. Տե՛ս Բռնի Միջազգային փոխակերպման կենտրոնի «Գլոբալ միլիտարիզացիայի ինդեքսը» (https://www.bicc.de/uploads/tx_bicctools/141209_GMI_ENG.pdf):

հակամարտության ընթացքի վրա ազդեցություն ունենալ՝ կշեռքի նժարն իր կողմը թեքելով: Մինչդեռ Հայաստանը որդեգրել է նույն ռազմավարությունն, ինչ իր մերձավոր դաշնակից Ռուսաստանը. ստիպված է կրկնօրինակել ՌԴ-ի՝ իր ռազմական ուժերը նորացնելու ցանկությունը և, եթե անգամ մեծ ցանկություն ունի ընդարձակելու ռազմական համագործակցությունն այլ երկրների հետ, միննույնն է՝ առաջիկայում անկարող կլինի վերացնել կախվածությունը Ռուսաստանից:

Զեկույցում Բոննի Միջազգային փոխակերպման ինստիտուտը մտահոգություն է հայտնում հայ-ադրբեջանական շփման գծում առկա զարգացումների հետ կապված: Ընդհանրապես, 2014-ն աչքի ընկավ հրադադարի ռեժիմի խախտումների թվի աճով: Շփման գծում միջադեպերի հետևանքով հաճախակի տուժում է ոչ միայն զինվորական, այլ նաև քաղաքացիական բնակչությունը: Նոյեմբերին ադրբեջանական զինուժը հայկական ռազմական ուղղաթիռ խփեց, ինչից հետո զենքի շաչյունն առավել պարզորոշ է լսվում, երկկողմ մեղադրանքերն՝ ավելի բարձր: Այս դեպքը կարող է էսկալացիայի վտանգավոր պարույր բացազատել երկու երկրների միջև, ինչը շատ դժվար կլինի զսպել:

ՀՀ զինված ուժերում 2014թ.-ին գրանցված մահվան ելքով 46 միջադեպերից 26-ը տեղի են ունեցել, նախնական տվյալներով, հենց հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով: Մնացած դեպքերում զինծառայողների մահվան պատճառներն սպանություններն են, ինքնասպանությունները, առողջական խնդիրները և այլն: Ինչպես նշվում է ԱՄՆ պետքարտուղարության ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրոյի «Մարդու իրավունքների 2013 թ.-ի ամենամյա զեկույցում²», զինված ուժերում կենցաղային վատ պայմանները, կոռուպցիան և հրամանատարների հաշվետվողականության բացակայությունը շարունակել են վատ վերաբերմունքի դրսևորման և մարտական գործողությունների հետ կապ չունեցող վնասվածքների պատճառ հանդիսանալ: «Չնայած զինված ուժերում ոչ կանոնադրական հարաբերությունների տարածվածության վերաբերյալ հուսալի վիճակագրություն չկա, սակայն զինվորները հաղորդել են իրավապաշտպան կազմակերպություններին, որ նման չարաշահումները շարունակվել են», - նշված է զեկույցում: Զինվորների ընտանիքները հայտնել են, որ զորամասերը վերահսկում են կոռումպացված պաշտոնյաները, իսկ իրավապաշտպան դիտորդները և օմբուդսմենը հաղորդել են այնպիսի դեպքերի մասին, երբ բանակ են զորակոչվել առողջական լուրջ խնդիրներ ունեցող անձինք, ովքեր նման խնդիրների դեպքում պետք է համարվեին զինվորական ծառայության համար ոչ պիտանի:

Վերջին տարիներին զինված ուժեր-քաղաքացի հարաբերությունները Հայաստանում դարձել են ամենաքննարկվող թեմաներից մեկը: «Հայաստանի զինված ուժերի վերջին տարիների հիմնական նշանաբաններից մեկը «Բանակը մեր տունն է, մեր ամրոցը» կարգախոսն

2. Տե՛ս «Մարդու իրավունքների զեկույց 2013թ. ԱՄՆ պետքարտուղարություն, ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո»:
(<http://safesoldiers.am/wp-content/uploads/2014/12/%D5%BA%D5%A5%D5%BF.%D5%A4%D5%A5%D5%BA-2013.pdf>)

է, և այդ շրջանակներում մենք միշտ ասում ենք, որ ստորաբաժանումը մեր ընտանիքն է, որտեղ ներդաշնակվում և համատեղ գործունեության են տրամադրվում մեր զինվորները, զորամասն էլ՝ մեր տունը», - ասում է³ ՀՀ պաշտպանության նախարարը: Վերջին տարիներին ՀՀ ՊՆ-ի կողմից (կամ նրա անմիջական ներգրավմամբ) իրականացվում են բազմաթիվ ծրագրեր՝ ուղղված քաղաքացի-բանակ կապի ամրապնդմանը կամ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիների վստահության մակարդակի բարձրացմանը: Մյուս կողմից էլ՝ տեղական և միջազգային իրավապաշտպան կազմակերպություններն են ահազանգում զինված ուժերում մարդու իրավունքների ոտնահարումների բազմաթիվ դեպքերի մասին:

«Միջազգային համաներում»-ը (Amnesty International) Հայաստանում մարդու իրավունքների վերաբերյալ 2013-ին հրապարակած իր զեկույցներից մեկում, մասնավորապես, նշում է. «Այլակարծության համար տեղ չկա. Ադրբեջանի հետ Լեռնային Ղարաբաղի շուրջ գոյություն ունեցող հակամարտության վերաբերյալ բոլորի կողմից ընդունվող դիրքորոշումները կասկածի տակ դնող քաղաքացիական ակտիվիստներն ու լրագրողները ենթարկվում են հետապնդումների և հալածանքների: Ինչպես նաև՝ հալածանքների են ենթարկվում բանակի խնդիրների մասին բարձրաձայնողները, քանի որ այն չլուծված հակամարտության պարագայում որպես ազգի պահպանման հենասյուն է դիտվում⁴» (ոչ պաշտոնական թարգմանություն):

Հայաստանի անվտանգության հետ կապված հարցերն այս կամ այն կերպ պարբերաբար բարձրացվում են երկրի համար առավել կարևոր որոշումների ընդունմանը վերաբերող յուրաքանչյուր քննարկմանը կամ դրանց ընդունմանը զուգահեռ:

2014-ին Հայաստանի իշխանությունները կայացրեցին և իրականացրեցին ևս մի ռազմավարական որոշում, որը, փաստորեն, հանդիսացավ Հայաստանի աշխարհաքաղաքական ընտրության արտահայտումը: Հայաստանն ավարտեց Եվրասիական տնտեսական միությանը (ԵՏՄ) անդամագրվելու շուրջ բանակցություններն ու ստորագրեց ԵՏՄ-ին միանալու մասին պայմանագիրը: Համաձայնագիրը, որն իր մեջ պարունակում է նաև քաղաքական, սոցիալական տարրեր, անկասկած անդրադառնում է նաև Հայաստանի արտաքին հարաբերությունների, պաշտպանական, սոցիալական ոլորտների հետ կապված ակնհայտ փոփոխությունների:

3. Տես «Երևանաբնակ շուրջ 600 զինծառայողներ 2014թ. 5-օրյա արձակուրդով են խրախուսվել» հոդվածը, Սիվիլնեթ , 2014: (<http://civilnet.am/2014/12/22/yerevan-soldiers-600-vacation-2014-5-days/#.VJfjZf8F1A>)

4. Տես Միջազգային համաներում (Amnesty International): “Armenia must protect all forms of free expression”: (<http://www.amnesty.org/en/library/asset/EUR54/003/2013/en/b86cfd6a-b0aa-4f86-a1d8-2b14e97e6c54/eur540032013en.pdf>)

Մեթոդաբանություն

Սույն ուսումնասիրությունն իրականացվել է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության կողմից՝ PAX նիդեռլանդական կազմակերպության աջակցությամբ իրականացվող «Ապահով զինվորներ՝ անվտանգ Հայաստանին» ծրագրի շրջանակներում:

Ուսումնասիրության նպատակն է վերհանել երիտասարդների ընկալումները Հայաստանի ներքաղաքական զարգացումների, արտաքին քաղաքականության, անվտանգության և մի շարք այլ հարցերի շուրջ: Առաջադրված նպատակին հասնելու համար ուսումնասիրության խնդիրն է բացահայտել հետևյալ հարցերը.

1. Ինչպիսիք ընկալումներ ունեն երիտասարդները Հայաստանի ներկայիս ներքաղաքական և արտաքին քաղաքական մարտահրավերների մասին:
2. Ինչպիսին է հարցվածների վերաբերմունքը երկրի հիմնական՝ պետական և ոչ պետական կառույցների/հաստատությունների նկատմամբ:
3. Ինչ ընկալումներ ունեն երիտասարդները մարդու իրավունքների վերաբերյալ՝ ներառյալ ՄԻ սահմանափակումները և ՄԻ պաշտպանության երաշխիքները:
4. Ինչ է անվտանգությունը երիտասարդների ընկալմամբ, և անվտանգությանն ուղղված ինչ մարտահրավերներ են տեսնում:
5. Ինչ պատկերացումներ ունեն երիտասարդները հզոր բանակի մասին, և որո՞նք են բանակի՝ անվտանգությանն ուղղված մարտահրավերներին դիմակայելու ճանապարհները:
6. Ինչպիսին է անվտանգության պահանջմունքի ազդեցությունը մարդու իրավունքների վերաբերյալ ընկալումների վրա:

Հետազոտության նպատակին հասնելու համար կիրառվել են տեղեկատվության հավաքագրման հետևյալ գործիքները.

Մեթոդներ	Գործիքներ
Ստանդարտացված դեմ առ դեմ հարցազրույցներ	Ստանդարտացված հարցաթերթիկ
Ֆոկուս խմբային (ՖԽ) քննարկումներ	Հարցաշար/ ուղեցույց

Ուսումնասիրությունն իրականացվել է 2014թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին Հայաստանում բնակվող 18-25 տարեկան երիտասարդների շրջանում՝ Երևանում, Տավուշի, Լոռու, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի մի շարք քաղաքային և գյուղական համայնքներում. Վանաձոր, Իջևան,



Գավառ, Գորիս, Աջաջուր, Սարիգյուղ, Սևքար, Մարգահովիտ, Սարալ, Նորատուս, Գանձակ և Շինուհայր: Դեմ առ դեմ հարցազրույցի մեթոդով, ստանդարտացված հարցաթերթիկով իրականացված ուսումնասիրության համար ընտրանքի ծավալը, ռեսուրսային սահմանափակումներով պայմանավորված, սահմանվել է 480 անձ: Հարցվողների ընտրությունն իրականացվել է քվոտային ընտրանքի սկզբունքով: Հետազոտության շրջանակներում սահմանվել են քվոտաներ (համամասնություն)՝ ըստ բնակավայրի տիպի (մայրաքաղաք-քաղաք-գյուղ), սեռի, տարիքի և ուսանող/ոչ ուսանող հարաբերակցությունների: Ընտրանքային սխալը կազմում է 4,4 տոկոս, հուսալիության աստիճանը՝ 95 տոկոս:

Հետազոտության ընտրանքը

Քանակական հետազոտության դեմ առ դեմ հարցման համար ընտրանքի ծավալը, ռեսուրսային սահմանափակումներով պայմանավորված, սահմանվել է 480 անձ, որն իրականացվել է քվոտային ընտրանքի սկզբունքով: Հետազոտության շրջանակներում սահմանվել են քվոտաներ ըստ բնակավայրի տիպի (մայրաքաղաք-քաղաք-գյուղ), սեռի, տարիքի և ուսանող/ոչ ուսանող հարաբերակցությունների: Ընտրանքային սխալը կազմում է 4,4 տոկոս, հուսալիության աստիճանը՝ 95 տոկոս:

	Հարցվող	%
Քաղաք	320	66.7
Գյուղ	160	33.3
Ընդամենը	480	100.0

Ուսումնասիրության որակական բաղադրիչն իրականացվել է ֆոկուս խմբային քննարկումների միջոցով: Ֆոկուս խմբերի մասնակիցների ընտրանքն իրականացվել է տիպային ընտրանքի սկզբունքի հիման վրա՝ հաշվի առնելով սեռատարիքային և կրթական գործոնը: Ընդհանուր առմամբ, իրականացվել է 14 ՖԽ՝ մեկական յուրաքանչյուր ընտրված համայնքում և երկուսը՝ Երևանում: Յուրաքանչյուր ՖԽ քննարկմանը մասնակիցների քանակը կազմել է, միջինը, 8-12 հոգի:


1. Հայաստանի առաջնահերթությունները երիտասարդների աչքերով

Մինչ Հայաստանի առաջնահերթ խնդիրների մասին երիտասարդների ընկալումների վերլուծությանն անցնելը՝ նախ դիտարկենք, թե ինչպես են նրանք գնահատում երկրի ներքին և արտաքին քաղաքականության հիմնախնդիրներով իրենց հետաքրքրվածության աստիճանը: Ինչպես երևում է Գծապատկեր 1.1-ից, էական տարբերություններ նկատելի չեն, սակայն, պետք է փաստել, որ ներքաղաքական զարգացումները, թեև ոչ զգալի չափով, սակայն, այնուհանդերձ, ավելի շատ են հուզում երիտասարդներին:

ՈՐՔԱՆՈ՛Վ ԵՔ ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾ

Գծապատկեր 1.1

Ներքաղաքական զարգացումներով



Արտաքին քաղաքականությամբ

Քննարկումների ժամանակ երիտասարդները տարբեր կերպ են հիմնավորում քաղաքականությամբ հետաքրքրվելու (կամ հակառակը՝ չհետաքրքրվելու) դրդապատճառներն՝ ընդգծելով, որ ներքաղաքական զարգացումները հետաքրքրություն չեն ներկայացնում, քանի որ զարգացումների և փոփոխությունների միտում չունեն, ի տարբերություն արտաքին քաղաքականության ոլորտում վերջին շրջանում տեղի ունեցող ակտիվ քննարկումների և իրադարձությունների:



«Ընդհանրապես, հետաքրքրվում եմ քաղաքականությամբ, այստեղ եմ ապրում ու եթե ինձ չհետաքրքրի, ապա էլ իմ է հետաքրքրելու, եթե վաղը ես եմ ընտրություն կատարելու: Օրինակ՝ իմ պիտի ընտրեմ, պիտի հետաքրքրվեմ, որ իմանամ»:
(արական, 18 տ., ք. Երևան)

«Վերջին մեկ տարում ակտիվ հետաքրքրվում եմ արտաքին քաղաքականությամբ: Ներքին քաղաքականությամբ չեմ հետաքրքրվում, որովհետև այն շատ ցածր մակարդակի վրա է քաղաքական հասունության առումով, մեր քաղաքական գործիչները ի վիճակի չեն որևէ լուրջ փոփոխություններ անել երկրում: Արտաքին քաղաքական մարտահրավերներից ինձ համար կարևոր է, որ լուծվի Ղարաբաղի հիմնախնդիրը ու, նաև, ՀՀ անդամակցումը մեծ կառույցներին, օրինակ՝ Եվրամիությանը, ինչը կբերի հարկերի, գների նվազմանը, կնպաստի երկրի զարգացմանը»:
(արական, 19 տ., ք. Երևան)

«Մենք պահանջատեր չենք մեր իրավունքների պաշտպանության հարցում, մարդիկ չգիտեն, թե ինչ իրավունքներ ունեն: Ապրում են զոհի կարգավիճակով, առօրյայով, կենցաղով և չեն փորձում պայքարել այդ ամենի դեմ:
(իգական 19 տ., Լոռի, ք. Վանաձոր)

«Քաղաքականությամբ չեմ հետաքրքրվում, ֆեյսբուքով միայն: Մենք չենք պայքարում մեր պրոբլեմների դեմ: Հիմնականում պայքարում են ակտիվիստները, իսկ մնացածն ուղղակի նայում է»:
(արական 21 տ., Լոռի, ք. Վանաձոր)

Սակայն, պետք է նշել, որ անգամ փաստելով իրենց պասիվությունը ներքաղաքական զարգացումների հանդեպ, երիտասարդները միևնույն ժամանակ քննադատաբար են վերաբերում իրենց իսկ պասիվությանը՝ համարելով դա ոչ պատեհ քաղաքացիական դիրքորոշում:

Քաղաքականությամբ հետաքրքրվածության այս ընդհանուր գնահատականից զատ, հարցվողներն առաջադրված 22 ներքաղաքական և արտաքին քաղաքականությանն առնչվող հիմնախնդիրներից առանձնացրել են 3 ամենակարևորները՝ ըստ կարևորության դասակարգելով դրանք առաջին, երկրորդ և երրորդ տեղերում: Ինչպես երևում է Աղյուսակ 1.1-ից, որում ներկայացված են գումարային (տոկոսով) ամենամեծ կշիռն ունեցող առաջին տասն հիմնախնդիրները (ամբողջական աղյուսակը տես հավելված #1-ում), առաջին չորս հիմնախնդիրը հավաքած ձայների քանակով զգալիորեն առավել են մյուսներից:

Աղյուսակ 1.1

Որո՞նք են այս պահին Հայաստանի համար ամենակարևոր խնդիրները:

	1-ին	2-րդ	3-րդ	Գումարային %
Գործազրկության բարձր մակարդակը	13.3	10	10	33.3
Աղքատության բարձր մակարդակը	10.2	12.3	9	31.5
Արտագաղթի ծավալները	12.3	8.8	9	30.1
Խաղաղ պայմաններում զինվորների մահացության դեպքերը	9	8.8	9.2	27
Մարդու իրավունքների խախտումները	6.7	4.2	7.3	18.2
Գնաճը	3.8	5.6	7.1	16.5
Պատերազմի վերսկսման հավանականությունը	5.2	5	4.8	15
Ղարաբաղի հիմնահարցը	5.4	5.2	2.7	13.3
Կրթության ցածր մակարդակը	3.8	3.5	5.4	12.7
Կոռուպցիան	2.9	5.4	4.2	12.5

Այսպես, ամենաարդիական առաջին երկու հիմնախնդիրները վերաբերում են սոցիալական ոլորտին, այն է՝ գործազրկության բարձր մակարդակը (33.3%) և, որպես հետևանք, աղքատության բարձր մակարդակը (31.5%): Գումարային տոկոսային հարաբերակցությամբ, այս հիմնախնդիրներն առաջնահերթ են հարցվածների գրեթե 65% համար:

«Ինձ համար կարևոր է աշխատատեղերի խնդիրը, որ շատ երիտասարդներ ավարտում են համալսարանը, բայց չեն կարողանում աշխատանք գտնել, իսկ աշխատանքը շատ կարևոր է, որ չլքեն երկիրը: Ղարաբաղի, ցեղասպանության խնդիրներն են շատ կարևոր: Եթե ճանաչեն, մեր տարածքը հետ կտան»:
(իգական, 25 տ., ք. Երևան)

«Աշխատատեղեր լինեն՝ երիտասարդների զբաղվածության հարցը կլուծվի, որ չհեռանան: Բոլորը հեռանում են...»:
(արական, 25 տ., Գեղարքունիք, գ. Նորատուս)

«Հայաստանի ամենակարևոր հարցը ժողովրդի սոցիալական հարցն է, որից դրո՞ված միգրացիան ավելացել է: Իսկ միգրացիան ազգի խնդիրն է: Եթե ժողովուրդը չլինի, մեր պետությունը չի լինի»:
(արական, 20 տ., ք. Երևան)

«Առաջին խնդիրն արտագաղթն է, պատճառը՝ գործազրկությունը: Մեր գյուղերում կյանք չկա ընդհանրապես»:
(իգական, 22 տ., ք. Երևան)

Արտագաղթի մեծ ծավալների հիմնախնդիրը, որը նշել է հարցվածների 30.1%-ը, դիտվում է թե՛ որպես սոցիալական հիմնախնդիրների հետևանք, թե՛ որպես ռազմավարական անվտանգության խնդիր, ինչի մասին խոսվում է նաև քննարկումների ժամանակ: Այն, թե ինչպես են ընկալում երիտասարդները արտագաղթին և այն ծնող պատճառներին ու հետևանքներին վերաբերող հիմնախնդիրը, ներկայացված է ստորև՝ քննարկումների ժամանակ հնչեցված մտքերից:

Ռազմական անվտանգության խնդրին առնչվող հիմնախնդիրներն ամենահաճախակի նշվողներից են թե՛ քննարկումների ժամանակ, թե՛ հարցման արդյունքներով: Այսպես, «ոչ մարտական պայմաններում զինվորների մահացության դեպքերն» ըստ կարևորության 4-րդ տեղն է զբաղացնում (27%), այս նույն շարքին կարելի է դասել «պատերազմի վերսկսման հավանականությունը» (15%) և «Ղարաբաղի հիմնահարցը» (13.3%): Այսպիսով, գումարային առումով, ռազմական անվտանգության հարցը հուզում է հարցվածների ավելի քան 55%-ին:

ՀՀ-ում մարդու իրավունքների խախտումները կարևորությամբ 5-րդ տեղում են, հարցվածների միայն 18.2%-ն է այս խնդիրը կարևորել, իսկ կոռուպցիան 10-րդը՝ մնացյալ խնդիրների շարքում (12.5%):

Ուշագրավ է այն ընկալումը երիտասարդների շրջանում (թեև ոչ մեծ տարածում գտած), որ տնտեսական հիմնախնդիրների հիմքում ընկած է ոչ բարենպաստ իրավական դաշտը և արդարադատության բացակայությունը ՀՀ-ում: Այս տեսանկյունից դիպուկ է երիտասարդներից մեկի խոսքից մեջբերումը:

«Տնտեսական խնդիրներն էլ են կապված արդարադատության հետ, որովհետև... օրինակ օտարերկրյա ներդրողները, հիմնականում, երբ ուզում են ներդրումներ կատարել, հետաքրքրվում են արդարություն կամ այստեղ, գործում է, թե՛ չէ, կամ էլ որքանով է գործում:

Օրինակ, վերջերս ԱՄՆ դեսպանն ասեց, որ հիմնականում ամերիկյան ներդրողները հետաքրքրվում են էստեղի արդարադատությամբ ու, երբ մենք իսկական պատկերը ցույց ենք տալիս՝ իրենք չեն ուզում ներդրումներ անել»: (արական, 18 տ., ք. Երևան)

«Ղարաբաղի խնդիրը հիմա շատ կարևոր է Նազարբաևի խոսքից հետո: 20 տարի է՝ պայքարում ենք այդ երկրի համար, հիմա տալու ենք ռուսներին: Երկրորդ հարցն արտագաղթն է. մենք վախենում ենք պատերազմից, բայց դա ռուսն է հրահրում՝ զենք վաճառելով թե՛ ադրբեջանցիներին, թե՛ հայերին: Եթե ռուսը մեզ-նից շահ չունենա՝ մեզ չի պաշտպանի: Դա է վկայում պատմությունը:

Պետք է վերջ տալ ռուսամոլությանը, հույսներս մեզ վրա դնենք: Իսկ օրենքներն էլ՝ գործելու, կիրառվելու համար լինեն»: (արական, 18 տ., Գեղարքունիք, ք. Գավառ)

«Խնդիրներ շատ կան, գործազրկության հարցը, օրենսդրական դաշտի թերացումը, որ մարդիկ իրենց պաշտպանված չեն զգում: Օրենքներ կան, որ իրենց չեն արդարացնում. միայն մի խմբի շահերն են պաշտպանում»: (իգական, 19 տ., Գեղարքունիք, ք. Գավառ)

«Մյուսը մեր օրենսդրական դաշտի թերի վիճակն է, ամենաթողությունը: Օրենքն աշխատում է նրա համար, ով միջոցներ ունի»: (արական, 20 տ., ք. Երևան)

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի է մի շարք եզրակացություններ անել: Նախ, պետք է փաստել, որ երիտասարդների համար այսօր սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները մտահոգության տեսանկյունից առաջին տեղում են: Ըստ ՀՀ պաշտոնական վիճակագրության խիստ լավատեսական (լավատեսական՝ քանի որ իրականում այս թիվն անհամեմատ մեծ է) ցուցանիշների՝ գործազրկության մակարդակը երկրում կազմում է մոտ 15%:

Այս ցուցանիշով Հայաստանը բացարձակ առաջատար է հետխորհրդային ողջ տարածքում: Գործազրկության և աղքատության բարձր մակարդակը, ինչպես նաև գնաճն այսօր մտահոգում և առաջնային լուծում պահանջող է համարում հարցվածների ավելի քան 80%-ը:

Սոցիալ-տնտեսական հիմնախնդրի արդիականությունն առավել ցայտուն է դարձնում այն փաստը, որ անգամ անվտանգության խնդիրը (առավել կենսական է և առնչվում է ֆիզիկական գոյության խնդրին), կարելի է ասել՝ երկրորդ տեղում է իր հրատապության աստիճանով:


Ոչ մարտական պայմաններում զինվորների մահացության դեպքերը, պատերազմի վերսկսման հավանականությունը և Ղարաբաղի հիմնահարցը մտահոգիչ է հարցվածների մոտ 55%-ի համար:

Արտագաղթի մեծացող ծավալները, որի մասին վկայում է անգամ պաշտոնական վիճակագրությունը, երիտասարդների համար առանձնակի նշանակություն ունի և մեծ մտահոգության առարկա է: Այս խնդիրը մտահոգում է հարցված երիտասարդներից յուրաքանչյուր երրորդին: Արտագաղթը մի կողմից սոցիալ-տնտեսական ճգնաժամի բնականոն հետևանք է, մյուս կողմից՝ ռազմական անվտանգության լրջագույն սպառնալիք, ինչը և ընկալվում է երիտասարդների կողմից:

Իրավունքի և արդարության/օրինականության կարևորումը, որպես հետևանք՝ դրա նկատմամբ պահանջը, համեմատաբար ավելի թույլ դրսևորումներ ունեն՝ դատելով հարցման արդյունքներից. մարդու իրավավունքների խախտումները ՀՀ-ում արդիական է համարում հարցվածների 18.2%-ը, իսկ կոռուպցիան՝ 12.5%-ը: Կարելի է ենթադրել, որ այս հիմնախնդիրները դուրս են մղված հասարակական գիտակցությունից՝ առավել կենսական և ֆիզիկական գոյությունը վտանգող հիմնախնդիրներով:

«Ուրաբաղի հակամարտության չլուծված լինելն է խնդիր, մենք ոչ պատերազմ-ոչ խաղաղություն վիճակում ենք: Մենք օգտագործման առարկա ենք մեծ պետությունների համար: Եթե մենք ինչ-որ մեկին պետք ենք՝ մեզ օգնում են, եթե ոչ՝ այդ հարցը շահարկվում է մեր դեմ»: (արական, 20 տ., ք. Երևան)


«Մեծ մասը խուսափում է բանակից, նշանակում է բանակում մի բան այն չի: Եթե այդ խնդիրները լուծենք, անվտանգության խնդիր չի լինի»: (իգական, 18 տ., ք. Երևան)



2. Վստահություն պետական և ոչ պետական կառույցների նկատմամբ

Երիտասարդների քաղաքական և քաղաքացիական ընկալումների պատկերը հասկանալու համար կարևոր է բացահայտել նրանց վերաբերմունքը տարբեր քաղաքական և հասարակական ինստիտուտների նկատմամբ: Այս նպատակով հարցման շրջանակներում նրանց առաջարկվել է գնահատել իրենց վստահության աստիճանը նշված 10 հիմնական կառույցների նկատմամբ՝ գնահատելով քառաստիճան սանդղակի միջոցով (վստահության առավելագույն աստիճանը՝ «լիովին վստահում եմ», վստահության նվազագույն դրսևորումը՝ «բոլորովին

ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԱՆՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ



Գծապատկեր 2.1



չեմ վստահում»): Տեսանելիության պարզեցման նպատակով դրական պատասխանները միավորվել են միմյանց հետ, բացասականները՝ միմյանց: Այսպես, ինչպես վկայում են Գծապատկեր 2.1-ում ամփոփված տվյալները, բացառությամբ բանակի, բոլոր պետական ինստիտուտները՝ ՀՀ նախագահի գլխավորությամբ, ամենացածր վստահությունն են վայելում երիտասարդների շրջանում:

Նախագահին հարցվածների միայն 15.4% է լիովին կամ մասամբ վստահում, ինչն ամենացածր ցուցանիշն է նշված բոլոր կառույցների շրջանում: Մի փոքր տարբերությամբ, սակայն կրկին ցածր վստահություն են վայելում մնացած բոլոր իշխանական կառույցները՝ օրենսդիր, գործադիր, արդարադատության և իրավապահ մարմինները:

Հետաքրքրական է, որ օմբուդսմենը, լինելով քաղաքացիներին առավել մոտ կառույց, որի գործառույթն է՝ գործադիր մարմինների կողմից քաղաքացիների նկատմամբ անարդարության դեպքում, նրանց շահերի նկատմամբ պաշտոնատար անձանց կողմից ոտնձգություններից պաշտպանելը, վայելում է վստահության նույնքան տոկոս, որքան ոստիկանությունը:

Հավելենք նաև, որ հարցվածների 18.1% դժվարացել է որևէ վերաբերմունք արտահայտել օմբուդսմենի նկատմամբ՝ ենթադրաբար ոչինչ չիմանալով այդ կառույցի մասին:

Միջազգային և հասարակական կազմակերպությունները բավականին բարձր վստահություն են վայելում երիտասարդների շրջանում, 57.3% և 65.2% համապատասխանաբար՝ չնայած վերջին տարիներին հասարակական կազմակերպությունների հասցեին անընդհատ շահարկվող «գրանտակեր» և այլ, մեղմ ասած, ոչ պատվաբեր շահարկումներին:

Երիտասարդների բարձր վստահությունը հասարակական կազմակերպությունների մասին կարելի է բացատրել նրանով, որ երիտասարդներից շատերը այս կամ այն կերպ առնչվում են ՀԿ-ների հետ՝ կամավորական աշխատանքներ կատարելով և/կամ տարբեր միջոցառումների/նախաձեռնությունների մասնակցելով:

Վստահության ամենաբարձր վարկանիշը վայելում են եկեղեցին և բանակը՝ 68.8% և 65.2% համապատասխանաբար: Եկեղեցին անվերապահորեն վստահություն է վայելում՝ պատմականորեն հանդիսանալով ազգային ինքնության կարևորագույն մաս:

Բանակի նկատմամբ վերաբերմունքը վստահության տեսանկյունից շատ նման է եկեղեցու հանդեպ վերաբերմունքին: Բանակը, հանդիսանալով

պետականության խորհրդանիշ, իր մեջ մարմնավորելով պետության հզորությունը և արցախյան հերոսամարտի անցյալը, ևս ընկալվում է որպես բացարձակ արժեք:

Վստահության և անվստահության թեկուզ մասնակի հիմքերը հասկանալու համար հարցվողներին առաջարկվել է գնահատել «հասարակ» քաղաքացիների համար նույն կառույցների թափանցիկության աստիճանը:

Ամենաանթափանցիկ գնահատվել է ՀՀ նախագահի գործունեությունը. Հարցվածների 85.5%-ը գտնում է, որ այն բոլորովին կամ գրեթե բոլորովին փակ է: Թափանցիկության հարցում ևս դիտվում է նույն տրամաբանությունն ու հերթականությունը այլ իշխանական կառույցների նկատմամբ, ինչը որ արձանագրվել է վստահության դեպքում. երիտասարդների կողմից այդ կառույցները որակվել են առավելապես փակ:

Օմբուդսմենի վերաբերյալ, ինչպես և նախորդ հարցում, հարցվածների 17.3% դժվարացել է պատասխանել, իսկ վերաբերմունք արտահայտածներից միայն 47.1% է այս կառույցը որակել որպես թափանցիկ, այն պարագայում, որ այն ի պաշտոնե պետք է լինի մաքսիմալ բաց բոլորի համար:

Միջազգային և հասարակական կառույցների գործունեությունը որակվել է բավականին թափանցիկ (58.4% և 71.7%), ինչը տրամաբանորեն համահունչ է նախորդ հարցին տված պատասխանների հետ:

Եկեղեցին, ինչպես և վստահության առումով, ամենաբարձր դիրքն է զբաղեցնում թափանցիկության տեսանկյունից ևս: Միակ կառույցը, որն զգալի տարբերություն, անհամապատասխանություն է արձանագրել վստահության և թափանցիկության ընկալումների առումով, զինված ուժերն են, բանակը: Եթե այլ կառույցների նկատմամբ վստահության և թափանցիկության ցուցանիշները տրամաբանորեն փոխկապակցված են, ապա բանակի դեպքում պատկերն այլ է:

Այսպես, եթե հարցվածների 65.2%-ը լիովին կամ ավելի շուտ վստահում է բանակին, ապա, միևնույն ժամանակ, հարցվածների 61.9%-ը գտնում է, որ բանակը բոլորովին կամ ավելի շուտ փակ է: Նշենք, որ նման անտրամաբանական պատկեր է գրանցվել միայն զինված ուժերի նկատմամբ վերաբերմունքում (Գծապատկեր 2.2):


Ամփոփելով վերը շարադրվածը՝ պետք է նշել, որ պետության հիմնարար կառույցների նկատմամբ, ինչպիսիք են ՀՀ նախագահը, եկեղեցին և բանակը, հարցվածների մոտ առանձնակի վերաբերմունք կա:

Սակայն, եթե ՀՀ նախագահի ինստիտուտն անձնականացվում է և վերաբերմունքի, վստահության մեջ առկա է կոնկրետ պաշտոնյայի կողմից կատարած աշխատանքի գնահատականը, ապա եկեղեցու և բանակի հանդեպ վերաբերմունքը այլ է, քանզի հասարակական գիտակցության մեջ այս ինստիտուտներն ընկալվում են այս կամ այն կերպ սրբացված և, բնականաբար, քննադատությունից դուրս կառույցներ:

Կարելի է եզրակացնել, որ եկեղեցին և բանակը հանրության կողմից ապրիորի, ի սկզբանե (միայն այն բանի համար, որ դա եկեղեցին և բանակն են) վայելում են հարգանք և վստահություն՝ անկախ այդ կառույցների կողմից կատարած աշխատանքի արդյունավետությունից:

ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ «ՀԱՍԱՐԱԿ» ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԱՄԱՐ

Գծապատկեր 2.2




2.1 Չինված ուժերի նկատմամբ վերաբերմունքը և այլ հարցերի հետ կապը

Աշվի առնելով ստացված արդյունքները և ուսումնասիրության նպատակները՝ առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում բանակին վստահողների և չվստահողների խմբերի համեմատական դիտարկումն այլ հարցերի հետ համադրությամբ:

Այսպես, բանակի նկատմամբ վստահության/անվստահության ցուցանիշը հարաբերելով բանակում ծառայելու պատրաստակամության հետ, օրինաչափ պատկեր է ստացվում: Այսպես, եթե բանակին վստահողների խմբում 73.4%-ն է պատրաստ ծառայել բանակում, ապա չվստահողների միայն կեսը՝ 52.5%-ը, ինչը ևս կարելի է բարձր ցուցանիշ համարել (Գծապատկեր 2.3): Ստացված արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ բանակում ծառայել/չծառայելու պատրաստակամությունը պայմանավորված է նաև բանակի նկատմամբ վերաբերմունքով:

ԵԹԵ ՀՆԱՐԱՎՈՐ ԼԻՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼ՝ ԾԱՌԱՅԵԼ ՀՀ ԲԱՆԱԿՈՒՄ, ԹԵ՛ ՈՉ, Ո՞Ր ՏԱՐԲԵՐԱԿԸ ԿԸՆՏՐԵՔ

Գծապատկեր 2.3



Մեկ այլ առանցքային հարց, որի վերաբերյալ այս երկու խմբերի մոտեցումները հետաքրքիր են և պետք է, որ որոշակի տարբերություններ արձանագրեին, բանակի հզորացման ուղիների մասին պատկերացումներն են: Ինչպես երևում է Գծապատկեր 2.4-ից, այս երկու խմբերի մոտեցումները քիչ թե շատ նույնական են:


Բացառություն են կազմում մարդու իրավունքների ապահովումը բանակում և հայրենասիրական ոգու դաստիարակումը: Այսպես, բանակին չվստահողների խմբում ավելի շատ են բանակի հզորացման գործում մարդու իրավունքների պաշտպանությունը կարևորողները, մինչդեռ վստահողների խմբում համեմատաբար ավելի շատ են հայրենասիրական



ոգու բարձրացման միջոցով բանակի հզորացման ուղին տեսնողները: Մնացած ուղիների մասով հարաբերակցությունը գրեթե նույնական է: Թե՛ այս, թե՛ մյուս խմբում հարցվածների շուրջ մեկ երրորդը բանակի հզորացումն առաջին հերթին տեսնում է սպառազինությունների ավելացման միջոցով (Գծապատկեր 2.4):

ԻՆՉ Է ԱՅՍՕՐ ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲԱՆԱԿԸ ՀՋՈՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Գծապատկեր 2.4




Եվ վերջին հարցը, որն անմիջականորեն վերաբերում է զինված ուժերին, բանակի ձևավորման նախընտրելի ուղիներն են երիտասարդների պատկերացմամբ: Ինչպես ցույց է տալիս այս երկու փոփոխականների համադրությունը, վստահողների խմբում ավելի շատ են (70.5%) պարտադիր զինվորական ծառայության կողմնակիցները, քան չվստահողների խմբում (62.3%) և համապատասխանաբար պայմանագրային հիմունքներով բանակի կողմնակիցները ավելի շատ են, մոտ 8%-ով, չվստահողների խմբում (Գծապատկեր 2.5):

Հարցերից մյուսը, որն սկզբունքային տարբերություններ գրանցեց և բաժանարար հանդիսացավ ընտրանքի համար, երկու աշխարհաքաղաքական ուղղությունների, այն է՝ ԵՏՄ և ԵՄ միջև ընտրությունն է, որը մանրամասն քննարկվում է այլ բաժնում (տես բաժին 3.1): Այսպես, այս երկու փոփոխականների համադրումն առանձնակի

հետաքրքիր փոխկապակցվածության պատկեր է տալիս. բանակին վստահողների խմբում գրեթե 15%-ով գերակշռում են ԵՏՄ կողմնակիցները, և հակառակը՝ ԵՄ կողմնակիցներն առավել շատ են չվստահողների շրջանում (Գծապատկեր 2.6): Այս երկու փոփոխականների կապի մասին է վկայում նաև կապի գործակիցը⁵:

Գծապատկեր 2.5

ԲԱՆԱԿԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՐ ՌԻԴԻՆ Է ՆԱԽԸՆՏՐԵԼԻ




Ակնառու տարբերություններ է նկատվում նաև օրենքով պաշտպանվածության վերաբերյալ հարցի հետ կապված: Բանակի հանդեպ վստահություն տածողների շրջանում կրկին 15%-ով, ի տարբերություն մյուս խմբի, գերակշռում են օրենքով իրենց պաշտպանված, մինչդեռ չվստահողների խմբում նույնքան չափով գերակշռում են բոլորվին կամ ավելի շուտ չպաշտպանված զգացողները (Գծապատկեր 2.7): Կրկին, կապի առկայությունը հաստատվում է նաև կոռելյացիայի գործակցի միջոցով⁶:

5. Pearson Chi-Square value =7.727, assumption significance =0.005
 6. Pearson Chi-Square value =9.972, assumption significance =0.002


ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒՄԸ/ԱՍՈՑԻԱՑՈՒՄԸ ՀԵՏԵՎՅԱԼ ԵՐԿՈՒ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՑ ՈՐԻՆ ԱՌԱՎԵԼ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐ ԿԼԻՆԵՐ

Գծապատկեր 2.6



ՁԵՐ ՕՐԵՆՔՈՎ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԶԳՈՒՄ ԵՔ

Գծապատկեր 2.7




Եվ վերջին՝ բովանդակային հարցը, որի հետ համադրումը հետաքրքիր պատկեր է տալիս, իշխանության բաշխման և կենտրոնացվածության մասին հարցն է: Առաջադրված երեք դատողություններից հարցվողների կողմից կատարած ընտրությունը էապես տարբեր կերպ է բաշխվել այս երկու խմբերում: Բանակին վստահողների խմբի գրեթե կեսը նախընտրում է իշխանության կենտրոնացում մեկ մարդու ձեռքում՝ ուժեղ ավտորիտար ղեկավար գերադասում, մինչդեռ չվստահողների ուղիղ կեսն անընդունելի է համարում իշխանության կենտրոնացումը մեկ մարդու ձեռքում: Այս երկու հարցերի միջև կապը դիտարկվածներից ամենաուժեղն է՝ դատելով կապի գործակցից⁷:

7. Pearson Chi-Square value =15.985, assumption significance =0.000

ՀԵՏԵՎՅԱԼ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԸՆՏՐԵՔ ԱՅՆ ՄԵԿԸ, ՈՐՆ ԱՎԵԼԻ ՄՈՏ Է ՁԵՐ ԸՆԿԱԼՄԱՆԸ

Գծապատկեր 2.8



Ընդհանրացնելով այս ենթաբաժնում բերված տվյալները՝ կարող ենք արձանագրել, որ բանակի նկատմամբ վստահություն և անվստահություն տաժողների միջև զգալի տարբերություններ կան նաև այլ առանցքային հարցերի շուրջ:

Կարելի է փաստել, որ «վստահողները» ավելի իդեալականացված վերաբերմունք ունեն բանակի վերաբերյալ: Դրա մասին են վկայում թե՛ զինված ուժերում ծառայելու նրանց ավելի մեծ պատրաստակամությունը, թե՛ պարտադիր զինակոչը բանակի ձևավորման ուղի դիտարկելը, և թե՛ բանակի հզորացման ուղիների մասին պատկերացումները, որոնց շարքում երկրորդ տեղում հայրենասիրական ոգու դաստիարակությունն է: Այս տեսանկյունից այս խումբը ռազմականացված հասարակարգերին բնորոշ մոտեցումներ ունի, եթե համեմատենք «չվստահողների» խմբի հետ: Վերջիններիս առանձնացնում է այն, որ նրանք բանակում մարդու իրավունքների պաշտպանությունը առավել շատ են կարևորում: Պատահական չէ, որ «չվստահողների» խումբն իրեն օրենքով պակաս պաշտպանված է համարում:


Հայաստանի աշխարհաքաղաքական նախընտրության հարցի նկատմամբ այս երկու խմբերի վերաբերմունքը ևս տարբերվում է: Առավել ռազմականացված «վստահողների» խումբը հակված է այն մտքին, որ Հայաստանը պետք է գնա դեպի ԵՏՄ՝ կիսելով հիմնական դաշնակից Ռուսաստանի ռազմականացված մղումները, իսկ չվստահողների խումբն առավել հակված է ԵՄ-ի հետ ասոցացմանը:

Վերջապես, «վստահողների» խումբն առավել ավտորիտար նկրտումներ ունի իշխանության բաշխման հարցում՝ ի տարբերություն «չվստահողների», որոնք անթույլատրելի են համարում իշխանության կենտրոնացումը:

3. Աշխարհաքաղաքական նախընտրություններ. անվտանգություն, թե՛ տնտեսական զարգացում

«Նա, ով կզիջի թեկուզ փոքրիկ ազատություն՝ հանուն անվտանգության, արդյունքում կզրկվի թե՛ մեկից, թե՛ մյուսից»:
Բենջամին Ֆրանկլին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԸՆԹԱՆՈՒՄ ԵՆ




Ետագոտության շրջանակներում ուսումնասիրվել են երիտասարդների ընկալումներն արտաքին քաղաքական կուրսի վերաբերյալ: Մասնավորապես՝ հանգամանորեն դիտարկվել է քաղաքական շրջանակներում ակտիվ քննարկվող Հայաստանի արտաքին քաղաքական կուրսի ընտրության հարցը, այն է՝ անդամակցումը Եվրասիական տնտեսական միությանը (ԵՏՄ⁸) և Եվրոպական միությանն (ԵՄ) ասոցացումը: Այս բաժնի առաջին հարցը վերաբերում է արտաքին քաղաքականության ընդհանուր կուրսին: «Ինչպե՞ս եք գնահատում Հայաստանի արտաքին քաղաքական զարգացումները» հարցին պատասխանելով՝ միայն 4.2 %-ն է գնահատել, որ դրանք ճիշտ ուղղությամբ են ընթանում, մինչդեռ 30.4 %-ը ՀՀ ընտրած արտաքին քաղաքական ուղին համարում է սխալ: Գրեթե հավասար մաս են կազմում «ավելի շուտ՝ ճիշտ» և «ավելի շուտ՝ սխալ» համարողները (26.5% և 28.5% համապատասխանաբար): Բավականին մեծ մաս են կազմում այս հարցին պատասխանել դժվարացողները՝ 10.4% (Գծապատկեր 3.1):

8. Շարադրանքի մեջ նաև օգտագործվում է Մաքսային միություն (ՄՄ)

Երիտասարդներին առաջարկվել է արտահայտել ԵՏՄ-ին կամ ԵՄ-ին ՀՀ ինտեգրվելու վերաբերյալ իրենց նախընտրությունները՝ պատասխանելով «Հայաստանի անդամակցումը կամ ասոցացումը հետևյալ երկու կառույցներից որին առավել նպատակահարմար կլիներ» հարցին՝ մի կողմ թողնելով, թե ներկայումս գործընթացներն ինչ ուղղությամբ են ընթանում:

Հետաքրքրական է, որ այս երկու աշխարհաքաղաքական միավորումների օգտին նախընտրությունների թվի զգալի տարբերություններ չկան: Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելու օգտին արտահայտվել է հարցվածների 48.3, իսկ Եվրոպական միությանն ասոցացվելու օգտին՝ 42.9%-ը (Գծապատկեր 3.2):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒՄԸ ԿԱՄ ԱՍՈՑԱՑՈՒՄԸ ՀԵՏԵՎՅԱԼ ԵՐԿՈՒ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՑ ՈՐԻՆ ԱՌԱՎԵԼ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐ ԿԼԻՆԵՐ




Վերը նշված երկու հարցերի համադրությունից հետաքրքիր պատկեր է ստացվում: Պետք է նշել, որ երկու դրական պատասխանները՝ «ճիշտ» և «ավելի շուտ ճիշտ», միավորվել են, համապատասխանաբար նույնն արվել է և «սխալ» և «ավելի շուտ սխալ» պատասխանների դեպքում՝ համեմատությունն ավելի տեսանելի և դյուրին դարձնելու նպատակով: Ինչպես երևում է գծապատկերից, ԵՄ-ն նախընտրողների երկու երրորդը գտնում է, որ արտաքին քաղաքական կուրսը սխալ է, ինչը բացատրելի է Հայաստանի՝ ԵՏՄ-ին անդամակցման գործընթացում գտնվելու համատեքստում: Միևնույն ժամանակ, հետաքրքրական է, որ ԵՏՄ անդամակցումը նախընտրողների 59.5%-ը ևս համարում է, որ արտաքին քաղաքական զարգացումները սխալ ուղղությամբ են ընթանում (Գծապատկեր 3.3): Այս երկու փոփոխականների միջև կապի գործակիցը ևս վկայում է հստակ փոխկապվածության մասին⁹ :

9. Pearson Chi-Square value =6.005, assumption significance =0.014

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ԻՆՉ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԵՆ ԸՆԹԱՆՈՒՄ**

Գծապատկեր 3.3



Հետաքրքիր է դիտարկելը, թե երիտասարդներն այս երկու տնտեսական միավորումների նկատմամբ իրենց նախընտրություններն ինչպես են հիմնավորում: Հարցվողներին առաջարկվել է բերված դատողություններից միայն այն դատողությունն ընտրել, որը հնարավորինս ամբողջական է հիմնավորում իրենց այդ ընտրությունը: Եթե այս երկու կառույցների նկատմամբ նախընտրությունները քանակապես գրեթե հավասար են բաշխված հարցվածների շրջանում, ապա այդ ընտրության հիմքում ընկած հիմնավորումները զգալի տարբերություններ ունեն: Այսպես, ԵՄ-ին ինտեգրումը նախընտրողների շրջանում ամենաորոշիչ գործոնը մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքներն են (43.2%), մինչդեռ ՄՄ-ն ընտրողների շրջանում այս հիմնավորումը կարևորել է գրեթե 5 անգամ ավելի քիչ թվով հարցվող (9.1%)՝ լինելով ամենավերջին տեղում բոլոր նշված հիմնավորումների շրջանում (Աղյուսակ 3.1):

Աղյուսակ 3.1 ԵՄՍ և ԵՄ նախընտրությունների հիմնավորումները:

Եվրասիական տնտ. միություն	Ընտրության հիմնավորումներ	Եվրոպական միություն
27.6	«Տնտեսության զարգացումն ավելի մեծ հեռանկարներ ունի տվյալ կառույցի շրջանակներում:	30.1
25.0	Այդ կառույցին անդամակցումն ապահովում է անվտանգության երաշխիքներ մեր երկրի համար:	12.1
24.1	Հայաստանի աշխարհագրական դիրքն է պայմանավորում տվյալ ընտրությունը:	6.8
11.2	Այդ կառույցի արժեքները չեն հակասում մեր ազգային մտածելակերպին:	2.4
9.1	Մարդու իրավունքներն ավելի պաշտպանված են տվյալ միության անդամ երկրներում:	43.2
2.6	Այլ տարբերակներ	3.4
0.4	Դժվարանում եմ պատասխանել	1.9
100%	Ընդամենը	100%

«Ավելի շուտ Եվրամիություն, քանի որ ավելի շատ բան ունենք սովորելու Եվրոպական պետություններից, օրինակ՝ մարդու իրավունքները թղթի վրա գրված լինելուց բացի նաև գործնականում կիրառվեն»:
(իգական, 20 տ., Տավուշ, ք. Իջևան)

«Մաքսայինին դեմ չեմ, բայց ավելի կողմ եմ Եվրամիությանը: Կարճ ասած՝ մարդու իրավունքների պատշաճության համար: Մաքսայինին էլ դեմ չեմ նրա համար, որ Հայաստանի կապը Ռուսաստանի հետ շատ մեծ է»:
(արական, 26 տ., Տավուշ, ք. Իջևան)

«Առաջին հերթին տնտեսականն է, քանի որ տնտեսական միավորումներ են: ԵՄ-ն իրենից ներկայացնում է 500 միլիոնանոց շուկա: Եթե մեր առաջ բացվի նման մեծ շուկա առանց մաքսային տուրքերի՝ 200 միլիոնանոց շուկայի փոխարեն միանշանակ պետք է ընտրել առաջինը, նամանավանդ, որ մեր մուտքը թե՛ դեպի ԵՏՄ, թե՛ ԵՄ իրականացվելու է Վրաստանի միջոցով, որն արդեն ԵՄ ասոցացված անդամ է»:
(արական, 19 տ., Երևան)

«Եթե մենք ռազմական ասպեկտը չքննարկենք, այլ միայն տնտեսականը, ապա թվերը շատ բան են ասում. 3 զարգացող ու 28 զարգացած երկիր, այսինքն մեզ Եվրոպան է ձեռք տալիս ու մենք որպես զարգացող երկիր մեր աչքի առաջ կունենանք Եվրոպական փորձը: Ու կա տարածքային խնդիր. մենք սահման չունենք ՄՄ անդամներից որևէ մեկի հետ»:
(արական, 18 տ., Երևան)

«Մաքսային միության հետ առաջընթաց չի լինի, ոնց կա ամեն ինչ՝ այդպես էլ կմնա, կամ էլ՝ ավելի կվատանա: Եվրոպական բոլոր պետություններն էլ շատ են զարգացած, նրանցից օգնությունն ավելին կլինի, քան Ռուսաստանից»:
(արական, 22 տ., Տավուշ, գ. Սևքար)

Մարդու իրավունքների պաշտպանության գործոնը կարևորվել է ԵՄ ասոցացման օգտին հանդես եկող երիտասարդների կողմից նաև ֆոկլուս խմբային քննարկումների ժամանակ:

Գրեթե հավասար թվով հարցվածներ են կարևորել այս երկու միությունների կազմում ՀՀ տնտեսության զարգացման հեռանկարը. 30.1%-ը Եվրոպական միության կազմում, 27.6%-ը՝ Եվրասիական տնտեսական միության կազմում:

Եթե հաշվի առնենք, որ երկու միավորումներն էլ տնտեսական են, ապա տնտեսության զարգացման հեռանկարը որպես նախընտրության հիմք ընտրողների թիվը բավականին ցածր է: Եթե ուսումնասիրենք, թե ֆոկլուս խմբային քննարկումների ժամանակ տնտեսական զարգացման հեռանկարն ինչպես են պատկերացնում երիտասարդները, ապա այս երկու միությունները նախընտրողների միջև սկզբունքային տարբերություններ կան: Այսպես, ԵՄ կազմում տնտեսական զարգացումը կապվում է ԵՄ

«Մաքսային միություն, քանի որ միշտ էլ կապված ենք եղել Ռուսաստանի հետ, աջակցությունը միշտ էլ իրենց կողմից է եղել: Աշխատանք տվողը մեզ Ռուսաստանն է: Մեր արտագնա աշխատողներն էլ հիմնականում Ռուսաստանում են»:

(Իգական, 20 տ., Տավուշ, գ. Սևքար)

«Ավելի լավ է՝ Մաքսային միությունը: Հայաստանի անապահով խափն իր օրվա հացը Ռուսաստանի կողմից է ստանում: Հայաստանը ինչ-որ բան որ կառուցում է՝ մեծ մասը Ռուսաստանում աշխատած գումարներով: Եվրոպայից էլ ենք օգնություն ստացել, շատ քիչ չափով, Ռուսաստանի օգնության հետ համեմատելու չէ: Վստահություն չկա, որ Եվրոպան կօգնի»:

(արական, 20 տ., Տավուշ, գ. Սևքար)

«Ռուսաստանն էնքանով է լավ, որ ավելի շատ հայ կա, քան Հայաստանում: Էնքանով են լավը, որ այլ ազգին աշխատանք են տալիս»:

(արական, 18 տ., Լոռի, գ. Մարգահովիտ)

«Նախընտրելի կլիներ, որ միանայինք հենց Ռուսաստանին, որովհետև մեր հայրենակիցները հիմնականում արտագնա աշխատանքի են գնում հենց Ռուսաստան, մեր հացը կախված է Ռուսաստանից»:

(Իգական, 22 տ., Լոռի, գ. Մարգահովիտ)

«Իհարկե լավ է եվրոպական փորձ ձեռք բերել և այլն, բայց Ռուսաստանը կարող է մեզ վրա ճնշում գործադրել»:

(արական, 19 տ., Երևան)

«Եթե մենք միանանք ԵՄ-ին, Ռուսաստանը հայ աշխատավորներին դեպորտ կանի, ու հայերի 80 տոկոսը կվերադառնա Հայաստան»:

(արական, 18 տ., Լոռի, գ. Մարգահովիտ)

Երկրների զարգացած տնտեսության, փորձի և ավելի մեծ շուկայի հետ:

Մինչդեռ Եվրասիական տնտեսական միությունը նախընտրողները Հայաստանի տնտեսական զարգացման հետ կապը բոլորովին այլ տեսանկյունից են դիտում: Առաջին հերթին ԵՏՄ-ի տնտեսական առավելությունը Ռուսաստանում մեծաթիվ արտագնա աշխատողների կողմից «օրվա հացը վաստակող» և Հայաստան ուղարկվող գումարներից չգրկվելն է, ինչը հնարավորություն կտա ոչ այնքան զարգացման, որքան նույն վիճակը պահպանելուն:

Քննարկումների ընթացքում ԵՏՄ ընտրության հիմնավորումների մեջ զգալի է Ռուսաստանի կողմից Հայաստանի նկատմամբ տնտեսական պատժամիջոցներ (ինչպիսիք են, օրինակ, գազի գնի թանկացումը, հայ աշխատողներին վտարելը) կիրառելու մտավախությունը: Այս տեսանկյունից, խոսքը ոչ այնքան զարգացման, որքան Հայաստանի տնտեսական վիճակն էլ ավելի չվատթարացնելու մասին է:

Հարցվածների համար Մաքսային միությանն անդամակցելու տնտեսական հիմնավորումներից առավել կարևոր և որոշիչ դեր ունեն անվտանգության հետ կապված հիմնավորումները, թեև, կրկին նշենք, որ այս կառույցներն իրենց բնույթով տնտեսական միավորումներ են: Այսպես, 25%-ը գտնում է, որ ԵՏՄ-ին անդամակցումն ապահովում է անվտանգության երաշխիքներ:

Անվտանգությանն առնչվող երանգ ունի նաև «Հայաստանի աշխարհագրական դիրքն է պայմանավորում տվյալ ընտրությունը» տարբերակը, քանի որ ՀՀ-ն ընդհանուր սահման չունի ԵՏՄ անդամ որևէ երկրի հետ, փոխարենը՝ ունի չլուծված հակամարտություններ և վիճելի հարցեր հարևան երկրների հետ:

Այս տարբերակն է ընտրել ԵՏՄ-ին ասոցացվելու կողմնակիցների 24.1%-ը: Այսինքն, ԵՏՄ-ն նախընտրողների համար գումարային (25% և 24.1%) անվտանգության գործոնը գրեթե երկու անգամ ավելի է կարևորվում, քան հնարավոր տնտեսական զարգացումը (27.6%) (Աղյուսակ 3.1):

Քննարկումների արդյունքում ձևավորված պատկերը կրկնում և հիմնավորում է ստացված քանակական արդյունքները: Առաջին ընդհանուր դիտարկումը, որ կարելի է անել քննարկումներից, այն է, որ անվտանգության գործոնը ԵՏՄ/ԵՄ նախընտրությունների հարցում շահարկվում է բացառապես բոլոր ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ՝ հանդիսանալով անկյունաքարային գործոն այս ընտրության հարցում: Եվ երկրորդ՝ պետք է փաստել, որ երիտասարդների ընկալումների մեջ ԵՏՄ-ին անդամակցումը նույնն է, ինչ «Ռուսաստանին միանալը»:

«Եթե չմիանանք Ռուսաստանին՝ Ադրբեյջանի կողմից շատ ճնշումներ կլինեն: Քանի որ Ռուսաստանը զորք ունի Հայաստանում, նա մեզ կպաշտպանի ու պատերազմ չի լինի»:
(իգական, 22 տ., Լոռի, գ.Մարգահովիտ)

«Սահմանների մի մասը ռուսական զորքերն են պահում, դա քիչ բան չէ: Եթե Եվրամիության ճանապարհն ընտրենք, ավելի շուտ կկործանվենք:.../ Եթե չընտրենք Մաքսայինն, ապա կհայտնվենք նույն վիճակում, ինչ Սիրիան, Եգիպտոսը: Մենք թշնամիներով շրջապատված ենք»:
(արական, 24 տ., Լոռի, ք. Վանաձոր)

«Եթե ռուսական զորքերը դուրս գան այստեղից, գուցե մենք չկարողանանք պաշտպանվել: Եթե պատերազմ լինի Ադրբեյջանի հետ, դժվար կլինի պաշտպանական երկիրը մեզ կօգնի. ոչ մեկը: Իսկ Ռուսաստանը կաջակցի: Թեև անկախության հարցը դժվար կլինի, գուցե կորցնենք»:
(իգական, 21 տ., Գեղարքունիք, գ. Նորատուս)

«ՀՀ աշխարհագրական դիրքն այնպիսին է, որ շրջափակված է մուսուլման ազգերով: ԵՏՄ-ն ավելի ճիշտ է հենց առաջին հերթին պատերազմից խուսափելու համար, թեև այսպես էլ է վտանգավոր, որ Ղարաբաղը չի մտնում ԵՏՄ-ի մեջ, էլի վտանգավոր է, որ Ադրբեյջանը կհարձակվի»:
(արական, 23տ., Սյունիք, ք. Գորիս)

Այսպես, ԵՏՄ-ն ԵՄ-ից գերադասողներին կարելի է բաժանել երկու խմբի. մի մասը, որն անվերապահորեն նախընտրում է ԵՏՄ անդամակցումը, և մյուս խումբը, ով կնախընտրեր ԵՄ-ին ասոցացումը, սակայն ինչ-ինչ պատճառներով, որոնք կդիտարկենք ստորև, ընտրում է ԵՏՄ-ն:

Ինչպես տեսնում ենք՝ այս ամենի հիմքում երիտասարդների կողմից բավական սուր ընկալվող անվտանգության խնդիրն է. ԵՏՄ-ին անդամակցումը հավասարեցվում է ռազմական անվտանգության և Ռուսաստանի կողմից պաշտպանվածության հետ, և հակառակը՝ չանդամակցելու դեպքում պատերազմն անխուսափելի է:

Թեև շատերի կողմից ԵՏՄ-ին անդամակցումը դիտվում է որպես անվտանգության երաշխիք, սակայն քիչ չէին նաև մտահոգություններն այն մասին, որ Ռուսաստանը, Ադրբեջանին զենք վաճառելով, խարխուլում, խաթարում է ռազմական գործընկերության մասին պատկերացումները, դրանով իսկ՝ Հայաստանի անվտանգության երաշխիքները:

Հետաքրքրական է, որ նման դատողություններ, որ Ռուսաստանն առաջնորդվում է բացառապես իր շահերով և հակամարտությունն օգտագործում որպես խաղաքար՝ հնչել են Երևանում երիտասարդների հետ իրականացրած քննարկումների ժամանակ, և միայն 2-3 դեպքում էր, որ քննարկման մասնակիցները փորձում էին արդարացնել նման մոտեցումը:

«Մենք բոլոր առումներով ավելի կապված ենք Ռուսաստանի, Ղազախստանի, Բելառուսի հետ, քան ԵՄ պետությունների: Մենք դառնում ենք Ռուսաստանի մի մասնիկը, ու այդ դեպքում Ռուսաստանը չի թողնի, որ Ադրբեջանը ոտնձգություններ անի: Հիմա Թուրքիան ու Ադրբեջանն իրենց ավելորդություններ թույլ չեն տալիս՝ Ռուսաստանից վախենալով: Մենք ինչքան Եվրոպայի դուռը ձեռք ենք, մեզ չի օգնել, Ռուսաստանն ավելի շատ է օգնել»: (արական, 25տ., Սյունիք, ք. Գորիս)

«Ռուսաստանը երկուսին էլ զենք է վաճառում, բիզնես է անում: Թուրքիայի սահմանն է պահում, մենք այդքան ռեսուրս չունենք, որ ամբողջ ՀՀ-ի անվտանգությունն ապահովենք»: (արական, 22 տ., Երևան)

«Ինչքան էլ որ Ադրբեջանին զենք է վաճառում՝ դրա հակազենքը մեզ է տալիս: Ոչ ոք չի կարող մեղադրել Ռուսաստանին, որ Ադրբեջանին զենք է վաճառում, բիզնես է անում, իր տնտեսությունն է զարգացնում: Պատերազմի ժամանակ էլ Ադրբեջանի վրա միտումնավոր այնպիսի զենք է վաճառել, որ չի աշխատել»: (արական, 23տ., Սյունիք, ք. Գորիս)

«Ռուսաստանին ձեռք է տալիս մեզ պահելը, որովհետև զենքի վաճառք է իրականացնում, Հայաստանին կծախի՝ կասի Ադրբեջանը պատերազմ է շուտով սկսում և հակառակը»: (արական, 18 տ., Երևան)

Եթե անվտանգության խնդիրը չլիներ՝ կուզեի Եվրոմիությանն անդամակցել, որովհետև, թեկուզ մարդու իրավունքների համար Եվրոպան ավելի ազատական երկիր է ու իր ունեցած արժեքներով ավելի բարձր՝ քան Ռուսաստանը, բայց գտնում եմ, որ անվտանգության խնդիր կա, ու մենք պարտադրված գնում ենք Մաքսային միություն»:

(արական, 18 տ., Երևան)

«Ես կցանկանայի, որ լինեինք ԵՄ մաս, իրենցից ավելի շատ բան ունենք սովորելու: /.../ Բայց մանկերելու տեղ շատ քիչ ունենք, ունենք անվտանգության խնդիր, որը չի կարող առաջնահերթ չլինել: Պետք է դրանով առաջնորդվել որոշումներ կայացնելիս»:

(արական, 22 տ., Երևան)

«Զուտ տնտեսական առումով Մաքսային միության 200 միլիոնանոց աղքատ շուկան չի համեմատվի կես միլիարդանոց, հարուստ Եվրոպականի հետ: Տնտեսական առումով նախապատվությունը պետք է տրվի Եվրոպային: Աշխարհագրական դիրքից ելնելով Մաքսային միությունն է ճիշտ: Զուտ մեր անվտանգության հարցից ելնելով, պետք է գնանք ԵՏՄ»:

(արական, 21 տ., Տավուշ, ք. Իջևան)

«Ես ինձ ավելի ապահով եմ զգում Ռուսաստանի կողքին, Ռուսաստանը շատ հզոր է էսօր, ինքը կարա զիջումների չգնա նույնիսկ Ամերիկայի հետ, ինքը շատ հզոր է էսօր՝ սկսած իր զորքի քանակից: Էսօր Ռուսաստանի հասարակության մտածելակերպը շատ ցածր մակարդակի վրա է, քան Ամերիկայինը, քան որոշ զարգացած Եվրոպական երկրներինը, բայց դա չի անդրադառնում իր հզորության վրա»:

(արական, 19 տ., Երևան)

«Եվրոպան ունի շատ մեծ արժեքներ, իր մշակույթը: Խոսքի ազատությունն այնտեղ մեծ արժեք է: Աշխարհագրական դիրքից ելնելով նախընտրում եմ ԵՏՄ-ն, ու նորից կիսաանկախ վիճակներ»:

(իգական, 19տ., Սյունիք, ք.Գորիս)

«Ռուսաստանինն է ամբողջ Հայաստանը, ինքը ոնց որոշի, այդպես էլ կանենք»:

(արական, 24 տ., Լոռի, ք.Վանաձոր)


Եվրասիական տնտեսական միությունը նախընտրողների մյուս մասն, ինչպես արդեն նշվել էր, նախընտրելով Եվրամիությունը, սակայն, կրկին անվտանգության խնդիրներից դրդված, նախընտրում է ԵՏՄ-ին անդամակցության ուղին, այս դեպքում՝ պարտադրված: Վերը ներկայացված են քննարկումների ժամանակ հնչած առավել ընդգրկուն մեջբերումները:

Շարունակելով և լրացնելով պարտադրված անդամակցության գաղափարը՝ չենք կարող շրջանցել քննարկումների ժամանակ հաճախակի հնչող Հայաստանի ինքնիշխանության պակասի, ներքին քաղաքական ռեսուրսի իսպառ բացակայության մասին վկայող դատողությունները:

3.1 ԵՏՄ և ԵՄ նախընտրությունները և այլ հարցերի հետ կապը

Աշվի առնելով, որ երիտասարդների նախընտրությունները ԵՏՄ և ԵՄ կուրսերի հետ կապված աշխարհայացքային բնույթ են կրում՝ դիտարկենք մի քանի փոխկապվածություններ ևս, որոնք վիճակագրորեն նշանակալի են: Նախ՝ դիտարկենք կապը ժողովրդագրական որոշ ցուցանիշների հետ. բնակավայրի տիպ, սեռ, տարիք, կրթություն: Ինչպես երևում է գծապատկերից, ակնհայտ է կապը բնակավայրի տիպի և ԵՏՄ/ԵՄ նախընտրությունների միջև¹⁰: Այսպես, քաղաքաբնակ երիտասարդները ավելի շատ են հակված ԵՄ-ին ինտեգրմանը, քան գյուղաբնակ երիտասարդները (Գծապատկեր 3.4):

ՄԱՔԱԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԻՊԻ




Գծապատկեր 3.4

Եվրասիական տնտեսական միությունը կամ Եվրոպական միությունը նախընտրելու և հարցվածների սեռային բաշխվածության միջև կապը հետաքրքիր հետևությունների տեղ է տալիս: Հաջորդ գծապատկերից ակնհայտ երևում է, որ Եվրոպական միությանը միանալուն ավելի շատ հակված են իգական սեռի ներկայացուցիչները, մինչդեռ Եվրասիական տնտեսական միություն նախընտրում են արական

10. Pearson Chi-Square value =7.207, assumption significance =0.007


սեռի ներկայացուցիչները: Սա առավել ակնհայտ է դառնում նաև, երբ համեմատում ենք ընդհանուր սեռային բաշխվածության հետ: Կապի մասին է վկայում նաև կոռելյացիայի գործակիցը¹¹ (Գծապատկեր 3.5):

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԻՊԻ



Մյուս փոփոխականը, որ շատ նշանակալի փոխկապվածություն¹² է ցույց տալիս՝ կրթության աստիճանի հետ կապն է: Որքան բարձր է կրթական ցենզն, այնքան երիտասարդներն ավելի հակված են դեպի ԵՄ, և ընդհակառակը (Գծապատկեր 3.6):

ԵՏՄ ԵՎ ԵՄ ՆԱԽԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ՝ ԸՍՏ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ



11. Pearson Chi-Square value =7.38 assumption significance =0.007
 12. Pearson Chi-Square value =13.59 assumption significance =0.004


Ժողովրդագրական ցուցանիշների և ԵՏՄ/ԵՄ նախընտրությունների միջև միայն տարիքային խմբերի դեպքում է, որ վիճակագրորեն նշանակալի կապ չի դիտվում, այսինքն այս նախընտրությունները տարիքով պայմանավորված չեն:

Ուսումնասիրենք ևս մի քանի կապեր՝ ելնելով թե՛ նախնական հիպոթեզներից, թե՛ հիմնվելով ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում հնչեցրած մոտեցումների վրա:

Քանի որ քանակական տվյալները, նաև քննարկումների արդյունքները վկայում են այն մասին, որ երիտասարդներն ընտրություն կատարելիս առաջնորդվում են ուղղակի անվտանգության գործոնով, ապա հետաքրքիր էր դիտարկել, թե այս երկու տնտեսական միավորումներից յուրաքանչյուրն ընտրածներն ինչպես են պատասխանել բանակի պաշտպանունակությունը գնահատելու մասին «Մեր բանակն ի վիճակի է երկիրը պաշտպանել այլ երկրների կողմից ուղղակի սպառնալիքի դեպքում» հարցին: Ինչպես երևում է գծապատկերից, այս երկու խմբերի պատասխանների միջև զգալի տարբերություններ կան. ԵՏՄ-ն ընտրածներն ավելի վստահ են բանակի հզորության վրա (33.8%), քան ԵՄ կողմնակիցները (19.9%) (Գծապատկեր 3.7): Այս երկու հարցերի միջև զգալի փոխկապակցվածության մասին է վկայում նաև կապի բարձր գործակիցը¹³:

Մյուս հարցի հետ կապը, որը հետաքրքրություն է ներկայացնում և տրամաբանորեն բխում է նախորդից, այն է, թե որքանով է հավանական Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորումն ուժային ճանապարհով:

ՄԵՐ ԲԱՆԱԿՆ Ի ՎԻՃԱԿԻ Է ԵՐԿԻՐԸ ՊԱՇՏՊԱՆԵԼ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՌԱԶՄԱԿԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ԴԵՊՔՈՒՄ




13. Pearson Chi-Square value =17.063 assumption significance =0.001

Գծապատկեր 3.8-ից ակնհայտ երևում է, որ ԵՏՄ-ն ընտրաձևերի շրջանում ուժային ճանապարհով խնդրի լուծումը կանխատեսողները՝ հավանական համարողները, ավելի շատ են, քան ԵՄ նախընտրաձևերը (համապատասխանաբար՝ 48.9% և 40.3%): Հակառակ օրինաչափություն է դիտվում ԵՄ-ն նախընտրողների շրջանում. ռազմական լուծումն անհավանական համարողների թիվը երկու անգամ ավելի է, քան ԵՏՄ-ն ընտրաձևերի շրջանում (14.3% և 6.7% համապատասխանաբար): Այս երկու հարցերի պատասխանների փոխկապվածությունը հաստատում է նաև կապի գործակիցը¹⁴ :

ՈՐՔԱՆՈ՛Վ Է ՀԱՎԱՆԱԿԱՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆ ՌԻԺԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Գծապատկեր 3.8




Պետք է նշել, որ այս հարցի համադրումը ԼՂ հիմնահարցի կարգավորման խաղաղ ճանապարհով հավանականության գնահատման հարցի հետ վիճակագրորեն նշանակալի կապ չի արձանագրում:

Այս փոխկապվածությունների շարքն ամփոփոխ վերջին հարցը՝ «Ձեր կարծիքով, ինչ է այսօր առաջին հերթին անհրաժեշտ ՀՀ բանակը հզորացնելու համար», շատ ուշագրավ պատկեր է տալիս: Գծապատկերից ակնհայտ երևում է, որ բանակի հզորացման մասին պատկերացումները զգալի տարբերվում են ԵՏՄ և ԵՄ ընտրաձևերի շրջանում: Այսպես, եթե ԵՏՄ կողմնակիցները հզորացման ճանապարհը տեսնում են առաջին հերթին ժամանակակից սպառազինություններով համալրելու միջոցով (31.9%), ապա ԵՄ կողմնակիցները՝ կարգապահության բարձրացման (28.0%) և բանակում մարդու իրավունքները հարգելու (24.5%) ճանապարհով:

14. Pearson Chi-Square value =8.560 assumption significance =0.036

Միևնույն ժամանակ, ԵՏՄ կողմնակիցներից միայն 11.8%-ն է կարևորել մարդու իրավունքները բանակում (Գծապատկեր 3.9): Այս երկու հարցերի միջև փոխկապվածության մասին է խոսում նաև կապի մեծ գործակիցը¹⁵ :

ԵՏՄ ԵՎ ԵՄ ՆԱԽՆԵՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԱԿԸ ՀՋՈՐԱՑՆԵԼՈՒ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Այսպիսով, ԵՏՄ/ԵՄ նախընտրությունների վերը նշված երեք հարցերի հետ համադրությունը թույլ է տալիս փաստել, որ ԵՏՄ կողմնակիցները ավելի ռազմականացված մոտեցում ունեն, ինչի մասին վկայում է նրանց համոզմունքը բանակի հզորության մասին և ուժային ճանապարհով խնդիրը լուծելու տեսլականը: Միևնույն ժամանակ, նրանք բանակը հզորացնելու առաջնային ուղին համարում են սպառազինությունների մրցավազքը:


Այս երկու խմբերի շրջանում մյուս կապի դիտարկումը, որ բխում էր նախնական ենթադրությունից, «օրենքով պաշտպանված կամ անպաշտպան զգալու» հետ կապն էր, որը, սակայն, վիճակագրորեն նշանակալի կապ չարձանագրեց: Այսինքն, այս երկու հարցերին տրված պատասխանները որևէ տրամաբանությամբ պայմանավորված չեն միմյանցով:

Եվ ամենաուժեղ կապը բոլոր դիտարկվածներից արձանագրվել է իշխանության բաշխման վերաբերյալ երիտասարդների պատկերացումների հետ¹⁶: Ինչպես ակնհայտ երևում է գծապատկերից, ԵՏՄ կողմնակիցների կեսը գտնում է, որ միշտ էլ պետք է «ուժեղ ձեռք», այսինքն թույլատրելի է համարում իշխանության կենտրոնացումը մեկ մարդու ձեռքում, մինչդեռ ԵՄ կողմնակիցների կրկին կեսը համարում է, որ ոչ մի պարագայում չի կարելի իշխանությունը մեկ մարդու ձեռքում կենտրոնացնել:

15. Pearson Chi-Square value =18.063 assumption significance =0.001
 16. Pearson Chi-Square value =22.042 assumption significance =0.000

ՀԵՏԵՎՅԱԼ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԸՆՏՐԵՔ ԱՅՆ ՄԵԿԸ, ՈՐՆ ԱՎԵԼԻ ՄՈՏ Է ՁԵՐ ԸՆԿԱԼՄԱՆԸ

Գծապատկեր 3.10



Ամփոփելով այս բաժնում շարադրվածը՝ մի քանի ամփոփիչ եզրահանգումներ անենք: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ երիտասարդների շրջանում չկա ընդգծված կողմնորոշում ԵՏՄ կամ ԵՄ ուղղությամբ: Նախընտրությունների թիվն այս երկու աշխարհաքաղաքական միավորումների օգտին զգալի տարբերություններ չի արձանագրում՝ մի փոքր առավելությամբ ԵՏՄ օգտին:

Թեև այս կառույցները նախընտրողների թվով գրեթե հավասար են, սակայն դրանց նախընտրության հիմնավորումների հարցում կան հստակ տարբերություններ: ԵՏՄ-ն նախընտրելի է, քանի որ անվտանգության երաշխիքներ է ապահովում. այս հիմնավորումը ծանրակշիռ է ԵՏՄ-ն նախընտրածների կեսի պարագայում: Ի տարբերություն սրա՝ ԵՄ-ն նախընտրելի է մարդու իրավունքների երաշխիքների տեսանկյունից: Երկու դեպքում էլ տնտեսության զարգացման հեռանկարը երկրորդ տեղում է: Միևնույն ժամանակ պետք է փաստել, որ տնտեսության զարգացման հեռանկարը տարբեր կերպ է հիմնավորվում. ԵՏՄ-ի դեպքում դա ՌԴ-ի կողմից հնարավոր տնտեսական ճնշումներից և պատժից խուսափելն է և, դրանով իսկ, տնտեսության առկա վիճակը պահպանելու ձգտումը, իսկ ԵՄ-ի դեպքում դեպի առավել գնողունակ և մեծ շուկա մուտք ունենալու հեռանկարն է:

Ինչպես ԼՂ հիմնահարցի կարգավորման մեջ, ԵՏՄ-ին անդամակցել/չանդամակցել կոնտեքստում ևս կա Ռուսաստանի հանդեպ երկակի, եթե չասենք՝ ծայրահեղ դիրքորոշումներ: Մի կողմից Ռուսաստանը դիտվում է որպես միակ ռազմական գործընկեր, որը երաշխավորում է և միանալու դեպքում կերաշխավորի ՀՀ անվտանգությունը, մյուս կողմից այդ գործընկերությունը երերուն բնույթ է կրում. երիտասարդների մի մասի պատկերացմամբ՝ Ռուսաստանը ելնում է իր սեփական շահերից և այդ շահերի փոփոխության դեպքում իրավիճակը կարող է կտրուկ փոխվել:

4. Անվտանգության և դրա մարտահրավերների մասին ընկալումները

Երիտասարդներն անվտանգությունը դիտարկում են երեք մակարդակներով. գլոբալ, պետական, անհատական: Գլոբալ մակարդակում անվտանգության ընկալումը պայմանավորված է համաշխարհային վտանգների և հնարավոր պատերազմների հետ, և այս առումով վտանգված է երկրագնդի ցանկացած ծայրում ապրող մարդ:

Պետական մակարդակով անվտանգության ընկալումները պայմանավորված են չլուծված հակամարտության արդյունքում Ադրբեյջանի հետ ցանկացած պահի պատերազմի վերսկսման և սահմանների անպաշտպանվածության խնդրի հետ:

Ընդ որում՝ վտանգված լինելու զգացումից ձերբազատվելու ուղին տեսնում են բանակի հզորացման մեջ, հզորացումն էլ, իր հերթին, տեսնում են զինված ուժերի թվաքանակի և, ինչպես ցույց են տալիս հետագա քննարկումները (տես գլուխ 4.1), սպառազինությունների ավելացման ճանապարհով:

«Ես չեմ կարծում, որ մոլորակի վրա մի մարդ կա ով իրեն զգում է պաշտպանված, ցանկացած ժամանակ կարող է ինչ-որ պատերազմ տեղի ունենալ, ու ոչ մեկս ապահովագրված չեմք դրանից, այսինքն՝ դրանով ես ինձ անպաշտպան եմ զգում, ու դա պայմանավորված չի իմ այստեղ (Հայաստանում-խմբ.) լինելով»:
(իգական, 18 տ., Երևան)

«Ցանկացած երկրում էլ, նույնիսկ եթե լինես ռազմական տեսակետից ամենահզոր երկրում, դու ապահովագրված չես, որովհետև ամեն ինչ կարող է պատահել»:
(արական, 19 տ., Երևան)

«Պետության առումով անվտանգ ես չեմ զգում, քանի որ սահմանին հայեր են զոհվում և այլն, /.../ կարող է մի օր արթնանամ, ու ասեն՝ պատերազմ է»:
(արական, 18 տ., Երևան)

«Մի որոշ ժամանակ առաջ քաղաքի վրայով թռիչքներ էին ու մեր շենքի վրայով էին իրանք թռչում, ինձ թվաց՝ պատերազմ է, վախ կա սրտներումս, որ ամեն պահ կարող է ինչ որ բան լինել, ու մեր ապագան է անորոշ, որ մենք չգիտենք, թե վաղը ինչ կլինի մեզ հետ»:
(իգական, 20տ., Երևան)

«Ամեն օր կրակոցներ են հնչում, այդ առումով ես ինձ անվտանգ չեմ զգում»:
(իգական, 21տ., Գեղարքունիք, գ. Նորատուս)

Միևնույն ժամանակ՝ անվտանգության մասին խոսելիս երիտասարդները բանակի վերաբերյալ հակասական տեսակետներ են հնչեցնում:

Մի կողմից գտնում են, որ բանակը հզոր է, և միևնույն ժամանակ խոսվում է կարգ ու կանոնի հաստատման և ոչ մարտական պայմաններում բանակում տեղի ունեցող սպանությունների մասին:

Արտաքին թշնամուն դիմակայելու համար բանակը հզորացնելու հիմնական, եթե չասենք միակ, ուղին երիտասարդներից շատերը կրկին կապում են Ռուսաստանի, այն է՝ ԵՏՄ անդամակցության հետ, թեև այն հանդիսանում է տնտեսական միավորում:

Հետաքրքրական է, որ երիտասարդներից ոչ մեկը չի հիշատակում ՀԱՊԿ-ի մասին, որին անդամակցում է ՀՀ-ը, և որի հիմնարար դրույթը սահմանվում է 4-րդ հոդվածով, համաձայն որի՝ մասնակից պետություններից յուրաքանչյուրի նկատմամբ ագրեսիայի ակտի դեպքում բոլոր մյուս մասնակից պետությունները տրամադրում են նրան անհրաժեշտ օգնություն, այդ թվում՝ նաև ռազմական, ինչպես նաև ցուցաբերում օժանդակություն՝ իրենց տրամադրության տակ գտնվող միջոցներով:

«Ավելի լավ է՝ մեր ուժերը ներդնեինք բանակը հզորացնելու, սահմաններում ավելի շատ զորքեր ունենալու գործին: Կարևորն այդ վախը չզգալն է: Թե չէ՝ երկրի ներսում վտանգ չեմ զգում»:
(իգական, 22տ., Գեղարքունիք, գ. Նորատուս)

«Ինձ անվտանգ եմ զգում, մեր բանակը հզոր է, պիտի խստացվի կարգ ու կանոնը: Զինվորներին հսկեն, որ սպանություններ չլինեն»:
(իգական, 17տ., Գեղարքունիք, ք. Գավառ)

«Կուզենայի, որ մեր զինվորական ծառայությունը կարողանար զինվորներին պաշտպանել Հայաստանի տարածքում, թույլ չտալ զինվորներին սպանել ոչ հակառակորդի կողմից»:
(իգական, 18տ., Գեղարքունիք, ք. Գավառ)

«Առաջին հերթին աշխատանք, որպեսզի մարդիկ իրենց ավելի ապահով զգան, զգան, որ իրենք ինչ-որ նշանակություն ունեն, սոցիալական նվազագույն շեմ ապահովեն»:
(արական 21տ., Տավուշ, ք. Իջևան)

«Անվտանգություն ասեցիք՝ միանգամից պատերազմ երևաց այքիս առաջ, Մաքսային միությունը միանգամից միտքս եկավ, որ... դե պապիներն են ասում, որ եթե ռուսները զորքը հեռացնեն՝ միանգամից պատերազմ է լինելու: Հիմա, եթե մաքսայինը չընտրենք, միանգամից կանգնում ենք պատերազմի առաջ, միանգամից դա մտքիս եկավ, անվտանգությունն ինձ համար կոնկրետ դա է»:
(իգական, 19 տ., Երևան)

«Ոստիկանները ծեծում են մարդկանց. Դա չի կարելի»:
(իգական, 17տ., Գեղարքունիք, ք. Գավառ)

Պետական մակարդակով անվտանգությունը խաթարող գործոններից մեկն էլ արտագաղթն է, որը երիտասարդների կողմից շեշտադրվում է նաև ՀՀ կարևորագույն խնդիրների շարքում:

Պետական մակարդակով անվտանգության մյուս սպառնալիքը, որը նշվել է երիտասարդների կողմից, ներքին բնույթ ունի. դա վստահության պակասն է պետության/կառավարության հանդեպ, այլ կերպ ասած՝ անկանխատեսելի կառավարմանը, որը համահունչ է մարդու իրավունքների եվրոպական չափանիշներին: Այս դրույթը ենթադրում է, որ կառավարության գործունեությունը պետք է համապատասխանի իրավական որոշակիության սկզբունքին և լինի կանխատեսելի:

Այժմ դիտարկենք, թե ինչպես են մեկնաբանում անվտանգությունը անհատական մակարդակում: Ի տարբերություն անվտանգության պետական մակարդակի՝ անհատական անվտանգության շուրջ ընկալումները տարաբնույթ են: Քննարկումների ժամանակ հնչեցված կարծիքների բազմազանությունը կարելի է դասակարգել հետևյալ կերպ: Անվտանգության անհատական մակարդակում երիտասարդների մի մասը կարևորում է տնտեսական, մյուս մասը՝ իրավական սպառնալիքները:

«Եթե հաշվի առնենք, որ Հայաստանում բանակ կա, որն ամուր է, գործում է, բայց հարևաններին դիմակայելու համար բավարար չէ՝ վտանգավոր է արտագաղթը, որի պատճառով էլ բանակում ծառայողների թիվն է կրճատվել: Օժանդակություն է հարկավոր կողքի հզոր պետություններից: Մաքսային միություն մտնելը կհզորացնի բանակը»:
(իգական, 20տ., Գեղարքունիք, ք. Գավառ)

«Եթե այսպես շարունակվի, մի քանի տարի հետո Հայաստանում մարդ չի մնա, կդատարկվի երկիրը, դա է ամենամեծ վտանգը: Իսկ սահմանները պահպանվում են, ոչինչ»:
(արական, 18տ., Տավուշ, գ. Սևքար)

«Քաղաքացիների անվտանգ ապրելակերպի համար պետք է մարդու իրավունքները պաշտպանված լինեն, դատարանն արդար գործի և ոստիկանությունն՝ անկողմնակալ»:
(արական 26տ., Տավուշ, ք. Իջևան)

«Ֆիզիկապես անվտանգ զգում եմ, բայց ոչ իրավական առումով: Իրավունքներս հաճախ խախտվում են որպես ուսանող և որպես քաղաքացի»:
(իգական 19տ., Լոռի, ք. Վանաձոր)

«Մեր երկրում անպաշտպան ես զգում, երբ անտեղի ոստիկանություն ես ընկնում. Չգիտես՝ դուրս կգամ, թե ոչ: Եթե օրենքը բոլորի համար չգործեց, անվտանգության մասին խոսք լինել չի կարող»:
(արական, 18տ., Գեղարքունիք, ք. Գավառ)

«Այսօր ես հարաբերականորեն ավելի ապահով կզգամ, եթե իմ իրավունքները չոտնահարվեն և իմ ունեցվածքի նկատմամբ ոտնձգություններ չլինեն»:
(արական, 18 տ., Երևան)

Իրավական առումով անվտանգությունը կախված է մարդու գիտելիքներից, թե ինչքանով կկարողանա իր իրավունքները պաշտպանել:
(արական 24 տ., Լոռի, ք. Վանաձոր)

Անվտանգ չեմ զգում ինձ ընդհանրապես: Մարդը տնից դուրս է գալիս ու չգիտի՝ հետ կգա, թե չէ: Եթե մարդու հետ մի բան պատահի, ոչ ոք չի կարող պահանջել արդարություն:
(արական 21տ., Լոռի, ք. Վանաձոր)

Անհատական մակարդակում անվտանգության իրավական սպառնալիքները կարևորողների տեսակետները բաժանվում են: Մի մասը գտնում է, որ իրավական անվտանգության երաշխավոր պետք է լինի կառավարությունն ու նրա համապատասխան մարմինները: Այսպես, ըստ քննարկման ընթացքում հնչեցրած կարծիքների՝ ոստիկանությունը, որպես իրավապահ մարմին և դատական համակարգը, որպես արդարադատության մարմին, չեն իրականացնում օրենքով իրենց վերապահված գործառնությունները՝ դրանով իսկ խաթարելով անհատի անվտանգության զգացումը:

Երիտասարդների մյուս մասը իրենց իրավական անվտանգության պաշտպանության երաշխավոր տեսնում են իրենց, այլ ոչ պետությանը: Անգամ եթե ինչ-որ իրավունքներ խախտվում են, մեղավորությունը փնտրում են իրենց չիմացության կամ անգործության մեջ:

Այս նույն տրամաբանության շրջանակներում երիտասարդներից շատերն իրենց անվտանգ են զգում, այն առումով, որ հարկ եղած դեպքում կարող են հասնել օրենքի կիրարկմանը և պաշտպանել իրենց իրավունքը:

Այս հարցի շուրջ կան նաև հակառակ տեսակետներ, համաձայն որոնց՝ իրավունքների իմացությունը բնավ չի երաշխավորում իրավական պաշտպանվածություն:

Ամփոփելով քննարկումների ընթացքում անվտանգության ընկալման վերաբերյալ հնչեցված կարծիքները, ինչպես արդեն նշել ենք, կարելի է առանձնացնել անվտանգության երեք մակարդակ՝ գլոբալ, պետական և անհատական: Գլոբալ անվտանգությունը, թեև ընկալվում և ընդունվում է որպես հնարավոր վտանգ, սակայն մեծ մտահոգության առարկա չէ երիտասարդների համար, քանի որ ընկալվում է որպես մի երևույթ, որի վրա իրենք ազդեցություն չեն կարող ունենալ: Նույնը չի կարելի ասել պետական մակարդակում անվտանգության մասին. «ցանկացած պահի պատերազմի վերսկսման» հավանականությունը հանդիսանում է անվտանգության զգացումը ծայրահեղ սրող հիմնական վախն ու սպառնալիքը: Իսկ երրորդ՝ անհատական մակարդակում երկու հիմնական սպառնալիք է առանձնացվում երիտասարդների հետ քննարկման արդյունքում. տնտեսական և իրավական պաշտպանվածության խնդիրը: Հետաքրքիրն այն է, որ երիտասարդների մի մասն իրավական պաշտպանվածության առումով առավել պաշտպանված են զգում, քանի որ կարծում են, որ իրենցից է կախված իրավական պաշտպանվածության հարցը: Մյուս մասը համոզված է, որ անգամ իրավունքների իմացությունը չի երաշխավորում պաշտպանվածություն, քանի որ «համակարգը մարդու/քաղաքացու դեմ է աշխատում»:

4.1 Հզոր բանակի տեսլականը


Ետազոտության շրջանակներում առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում երիտասարդների դիրքորոշումները բանակի վերաբերյալ: Նախքան տվյալների վերլուծությանն անցնելը՝ նշենք, որ ուսումնասիրության շրջանակներում հարցված 219 արական սեռի ներկայացուցիչներից 46%-ը չի ծառայել բանակում, իսկ 54%-ն արդեն ավարտել է ծառայությունը ՀՀ կամ Պաշտպանության բանակում:

Երիտասարդների տրամադրվածությունը բանակի նկատմամբ պարզելու համար նրանց առաջադրվել է հետևյալ հարցը. «Եթե հնարավոր լիներ ընտրություն կատարել՝ ծառայել ՀՀ բանակում, թե ոչ, Դուք անձամբ ի՞ր տարբերակը կնախընտրեիք»: Քանի որ հարցը տրվել է անկախ սեռային պատկանելության, իզական սեռի ներկայացուցիչների դեպքում առաջարկվել է պատասխանել եղբայրների, մտերիմ ընկերների փոխարեն: Հարցվածների գրեթե կեսը (47.1%) միանշանակ կծառայեր, անգամ ընտրության հնարավորության դեպքում: Ի հակադրություն դրա՝ հարցվածների 22.1%-ը միանշանակ չէր ծառայի: Ընդհանուր առմամբ, եթե հաշվի առնենք նաև ոչ ծայրահեղ դիրքորոշումները, բանակում ծառայության նկատմամբ վերաբերմունքն ավելի շատ դրական է, քան բացասական (Գծապատկեր 4.1):

Եթե դիտարկենք նույն հարցի նկատմամբ դիրքորոշումը՝ տարբերակված բանակում ծառայած և չծառայածների շրջանում, ապա շատ հետաքրքրական պատկեր է ստացվում: Հարցվածների այն խմբում, որը բանակում ծառայելու նկատմամբ բացասական է տրամադրված,


ԵԹԵ ՀՆԱՐԱՎՈՐ ԼԻՆԵՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼ՝ ԾԱՌԱՅԵԼ ՀՀ ԲԱՆԱԿՈՒՄ, ԹԵ ՈՉ, ԴՈՒՔ ԱՆՁԱՄԲ Ո՞Ր ՏԱՐԲԵՐԱԿ ԿՆԱԽԸՆՏՐԵԻՔ

Գծապատկեր 4.1



մեծամասնություն կազմում են բանակում չճառայածները՝ 72.6%, և ճիշտ հակառակը՝ բանակում ծառայության նկատմամբ դրական տրամադրվածություն ունեցողները հիմնականում արդեն ճառայածներն են (69.3%) (Գծապատկեր 4.2): Այսպիսով, կարելի է փաստել, որ բանակում ծառայելու նկատմամբ վերաբերմունքը պայմանավորված է ծառայության փորձով, ինչի մասին է վկայում նաև կոռելյացիայի բարձր գործակիցը¹⁷:

ԵԹԵ ՀՆԱՐԱՎՈՐ ԼԻՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼ՝ ԾԱՌԱՅԵԼ ՀՀ ԲԱՆԱԿՈՒՄ, ԹՅ ՈՉ, ՈՐ ՏԱՐԲԵՐԱԿԸ ԿԸՆՏՐԵՔ



Հետաքրքիրն այն է, որ քննարկումների ժամանակ հնչեցված կարծիքները չեն արտացոլում հարցման արդյունքում ստացված պատկերը: Երիտասարդները, մասնավորապես արական սեռի ներկայացուցիչները, բացասական են տրամադրված բանակում ծառայության նկատմամբ՝ բերելով տարբեր պատճառաբանություններ, ինչը մանրամասն կդիտարկենք ստորև:

Մինչ քննարկումների ընթացքում հնչեցված կարծիքների վերլուծությանն անդրադառնալը՝ դիտարկենք, թե ինչպես են երիտասարդները պատճառաբանում բանակում ծառայելու անհրաժեշտությունը և հակառակը՝ ծառայելու անցանկալի լինելը:

Ինչպես երևում է Աղյուսակ 4.1-ից, ծառայելու օգտին առաջադրված տարբերակներից առավել հաճախ նշվել է «պետության անվտանգությունն ապահովելու համար» տարբերակը՝ 36.2%, որին հաջորդում է «սեփական ընտանիքի և հարազատների անվտանգությունը պաշտպանելու համար» տարբերակը՝ 23.7%: Բավականին զգալի մասը՝ հարցվածներից յուրաքանչյուր 5-րդը, գտնում է, որ ծառայությունն անհրաժեշտ է տղաների ինքնահաստատման և կայացման համար:

Քննարկումների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ ծառայության անհրաժեշտությունը որպես պարտք պետության, հայրենիքի նկատմամբ կարևորում են հիմնականում իգական սեռի ներկայացուցիչները:

17. Pearson Chi-Square value =33.823 assumption significance =0.00

Աղյուսակ 4.1

Ինչպե՞ս կհիմնավորեք բանակում ծառայելու անհրաժեշտությունը:

	Հարցվող	%
Պետության անվտանգությունն ապահովելու համար	133	36.2
Սեփական ընտանիքի և հարազատների անվտանգությունը պաշտպանելու համար	87	23.7
Բանակում տղաները ինքնահաստատվում են, դառնում ինքնուրույն	73	19.9
Բանակում ծառայելը տղաների պարտականությունը/պարտքն է	39	10.6
Բանակի հզորացման համար	23	6.3
Բանակում մնալու և ծառայությունը որպես աշխատանք շարունակելու համար	6	1.6
Այլ	6	1.6
Ընդամենը	367	100

Եթե վերլուծենք քննարկումների ընթացքում հնչեցված կարծիքները, ապա ակնհայտ է դառնում, որ երիտասարդները հստակ տարբերակում են հանուն պետության հանդեպ ունեցած պարտքի ծառայելը հանուն ընտանիքի պաշտպանության ծառայելուց: Գերիշխող մոտեցումը, որը հնչեցվել է քննարկումների ժամանակ, այն է, որ ոչ պատերազմական պայմաններում բանակում ծառայելը անընդունելի է, մինչդեռ վտանգի դեպքում ընտանիքի պաշտպանության համար բանակ կամ, ավելի շուտ, պատերազմ գնալը չի քննարկվում:

Այն, թե ինչու են պատանիները ծառայությունը բանակում որպես պարտք պետության հանդեպ հակադրում ծառայությանը՝ հանուն հարազատների պաշտպանության, առավել ընդգրկուն ներկայացված է երիտասարդներից մեկի խոսքում:

«Շուտով գնալու եմ բանակ ու այն մտքով եմ գնում, որ ոչ թե պետությունն եմ պաշտպանում, այլ հարազատներիս և բարեկամներիս: Չեմ կարծում, որ պետությունն իմ մեջքին կանգնած կլինի իմ ծառայության ընթացքում»: (արական, 18տ., Լոռի, գ. Մարգահովիտ)

«Տղաները պիտի անպայման ծառայեն, այլապես ղվ կպաշտպանի իր ընտանիքը, իր ծնողներին: Իմ եղբորը կհորդորեմ ծառայել, որ մեզ պաշտպանի: Մեծամասնությունը չի ուզում, բայց սահմանները պիտի պահել»: (իգական, 18 տ., Գեղարքունիք, ք. Գավառ)

«Քանի որ սահմանների պաշտպանության խնդիր կա և, երկրորդն էլ, տղամարդու կայանալու համար. բանակը տղամարդու համար ամենամեծ դպրոցն է»: (իգական, 24տ., Լոռի, գ. Մարգահովիտ)

Աղյուսակ 4.2

Ինչպե՞ս կհիմնավորեք բանակում ծառայելու անցանկալի լինելը

	Հարցվող	%
Բանակում ծառայողների անվտանգությունն ապահովված չէ	117	37.3
Բանակում հարցերը կարգավորվում են ծանոթի/բարեկամի/փողի միջոցով	52	16.6
Ժամանակի անհիմաստ վատնում է	45	14.3
Բանակում չկա կարգապահություն	32	10.2
Բանակում զինվորները ենթարկվում են ֆիզիկական բռնության, բարոյական նվաստացման	32	10.2
Ծառայողների համար ապահովված չեն անհրաժեշտ նվազագույն պայմաններ	19	6.1
Այլ	17	5.4
Ընդամենը	314	100

Քննարկումների ընթացքում ևս հաճախակի հնչեցվող տեսակետ էր այն, որ բանակում ծառայելը անհրաժեշտ է տղաների կայացման համար, ընդ որում, պետք է նշել, որ այդ տեսակետն առավել հաճախակի հնչեցվում էր իգական սեռի ներկայացուցիչների կողմից:

«Կուզեմամ, որ ծառայեն, քանի որ բանակում ավելի ինքնավստահ են դառնում ու ինքնուրույն»:
(իգական, 18տ., Լոռի, գ. Մարգահովիտ)

«Որ վտանգ լինի, որ ասեն հիմա կգան-կմտնեն Հայաստան՝ ես միանշանակ կգնամ պատերազմի, բայց հիմա, հանգիստ պայմաններում ես չեմ գնա ծառայելու»:
(արական, 20 տ., Երևան)

«Զեմ ծառայել, բայց եթե անհրաժեշտություն լինի ընտանիքը պաշտպանել, անպայման կգնամ»:
(արական, 23տ., Գեղարքունիք, գ. Նորատուս)

«Զեմ ծառայել, չեմ ծառայի: Հիմա պայմանները այնպիսին են, որ չեմ գնա: Բայց եթե խիստ անհրաժեշտ լինի, արտակարգ իրավիճակներում, կգնամ»:
(արական, 26տ., Տավուշ, ք. Իջևան)

«Ծառայելը պետք է. ինքնահաստատվում ես, ընկերներ ես ձեռք բերում, կոփվում ես: Երկրի համար դա անհրաժեշտ է, մեզ պաշտպանված ենք զգում: Զեմ ծառայել, բայց կարծում եմ՝ տղային դա շատ է պետք»:
(արական, 25 տ., Գեղարքունիք, գ. Նորատուս)

«Զէի գնա, բայց եթե պատերազմական վիճակ լիներ, մտածելու բան չունեմ. հաստատ կգնայի, առանց կասկածի»:
(արական, 18 տ., Երևան)

Հատկանշական է, որ բանակում ծառայության միջոցով կայանալու տեսակետը գերիշխում էր անգամ այն դեպքերում, երբ միևնույն ժամանակ փաստվում էր մարդու իրավունքների ոտնահարումները զինվորների նկատմամբ:

Բոլորն, ովքեր արտահայտվել էին բանակում չծառայելու օգտին, իրենց այդ դիրքորոշումն առավել ընդգրկուն հիմնավորող պատճառներից ընտրել են միայն մեկը: Ինչպես երևում է Աղյուսակ 4.2-ից, գերակշռող է անվտանգության խնդիրը: Հարցվածների 37.3%-ը գտնում է, որ բանակում ծառայողների անվտանգությունն ապահովված չէ: Այս տարբերակն իր մեջ ներառում է ինչպես հակառակորդի կողմից զինադադարի ռեժիմի խախտման հետևանքով զոհվելու, այնպես էլ՝ ոչ կանոնադրային հարաբերությունների հետևանքով զինվորների մահվան դեպքերը: Սակայն, ինչպես ցույց տվեցին քննարկումները, երիտասարդներին առավել մտահոգում են ոչ մարտական պայմաններում մահվան դեպքերը:

Ինչպես արդեն նշվել էր՝ քննարկումների արդյունքների վերլուծությունը ևս վկայում է նրա մասին, որ զինվորների անվտանգությունը, կյանքի երաշխիքներ չունենալը ծառայության նկատմամբ ունեցած բացասական վերաբերմունքի ամենածանրակշիռ և հիմնական պատճառներից է:

Ոչ կանոնադրային հարաբերությունները, որոնք երբեմն նաև մահվան ելքով պատահարների պատճառ են դառնում, նույնպես բանակից

«Ես չէի գնա, ով էլ վերադառնում է՝ գոհ չի: Չինվորը հայրենիքի պաշտպանն է, զինվորին էլ պետք է պահեն, որ ինքն էլ սահման պահի, բայց շատերից եմ լսել որ մի հատ մատը շարժելու, զգաստ չկանգնելու համար կարող է բռնեն-ծեծեն, դրա համար էլ ոչ մեկ չի ուզում գնա»:
(արական, 18տ., Լոռի, գ. Մարգահովիտ)

«Բանակում գաղութի կյանքի նման են ապրում, թշնամաբար ճնշում են իրար»:
(արական, 20տ., Տավուշ, գ. Սևքար)

«Ինչու՞ իմ եղբայրը գնա ծառայելու, օլիգարխի տղան՝ ոչ: Եթե պաշտպանվեն իրավունքները, թող ծառայի, բայց ներկայիս բանակում ծառայի իմ համար, երբ մի անկապ պատճառով կարող է զոհվել:
(իգական, 21տ., Գեղարքունիք, գ. Նորատուս)

«Դու գնում ես ծառայելու, բայց կողքդ մեկը, ով մեծահարուստ է, չի գնում ու իր փոխարեն հիվանդի են ծառայության տանում»:
(արական, 18տ., Լոռի, գ. Մարգահովիտ)

«Փող տալով ազատվում են, հիվանդություն են կեղծում»:
(արական, 24տ., Գեղարքունիք, գ. Նորատուս)

«Պայմաններ պետք է ստեղծեն դրա համար, ես չէի ծառայի ու իմ կարծիքով ոչ մեկ չի ծառայի, ներկա դրությամբ ես կգնամ ծառայելու, երբ որ ինձ վարձատրեն, պետք է պայմաններ ստեղծեն»:
(արական, 20 տ., Երևան)

խուսափելու ծանրակշիռ պատճառ են: Ընդ որում՝ այդ դեպքերի մասին պատմությունները հաճախ ոչ թե հիմնված են սեփական փորձի վրա, այլ դրանց մասին պատմությունները փոխանցվում են ծառայություն անցածների ընկերներից:

Բանակում չճանաչելու օգտին բերվող փաստարկներից հաջորդը հավասարության և արդարության սկզբունքի խախտումն է, բանակում կոռուպցիայի դեպքերը, երբ «հարցերը լուծվում են ծանոթ/բարեկամ/փողի միջոցով»: Այս տարբերակն է նշել հարցվածների 16.6%-ը (Աղյուսակ 4.2):

Գրեթե նույնքան տոկոս են կազմում բանակում ծառայությունը որպես ժամանակի անիմաստ վատնում ընկալողները (14.3%) (Աղյուսակ 4.2): Շատերի համար ընդունելի կլիներ մեկամյա ծառայությունը, ինչը հնարավորինս կարճ ժամանակով է կտրում զինվորին առօրյա կյանքից՝ փոխարենը ոչինչ չտալով:

«Բանակում կարգապահության բացակայությունը» և «Բանակում զինվորները ենթարկվում են ֆիզիկական բռնության և բարոյական նվաստացման» տարբերակները, որոնք, ըստ էության, գրեթե նույնանման պատասխաններ են, նշել են հավասար թվով հարցվողներ՝ 10.2% (Աղյուսակ 4.2): Միավորելով այս երկու պատասխանները՝ կարելի է փաստել, որ հարցվածների ավելի քան 20%-ի համար ոչ կանոնդրական հարաբերությունը հանդիսանում են բանակից խուսափել ցանկանալու պատճառ:


Մյուս հարցը, որն ուսումնասիրվել է հարցման շրջանակներում, բանակի ձևավորման սկզբունքն է: Հարցված երիտասարդների 60.8%-ը գտնում է, որ Հայաստանում պետք է պահպանել պարտադիր զինվորական ծառայությունը, մինչդեռ 37.1%-ը համարում է, որ Հայաստանը պետք է անցնի պայմանագրային հիմունքներով բանակի ձևավորմանը:

Բանակի մասին ընկալումների ուսումնասիրությունը թերի կլիներ՝ առանց դիտարկելու, թե ինչպես են տեսնում երիտասարդները ներկայիս բանակի հզորացման ուղիները, այլ կերպ ասած՝ ինչ է հզոր բանակն իրենց պատկերացմամբ: «Ինչ է այսօր առաջին հերթին անհրաժեշտ ՀՀ բանակը հզորացնելու համար» հարցին երիտասարդների նախապատվությունները հետևյալ կերպ են դասակարգվել: Ինչպես երևում է Գծապատկեր 4.3-ից, հզոր բանակն, առաջին հերթին, ժամանակակից սպառազինություններով պետք է համարված լինի (27.5%), ինչը տեղավորվում է սպառազինությունների մրցավազքի տրամաբանության մեջ: Հաջորդն, ըստ կարևորության, կարգապահությունն է, այսինքն՝ ենթակայության և իշխանության խիստ աստիճանակարգումը (24.8%):

Հետաքրքրական է, որ չնայած այն բանին, որ, ըստ նախորդ հարցին տված պատասխանների, երիտասարդները չեն ցանկանում ծառայել բանակում՝ առավելապես ծառայողների անվտանգության երաշխիքներ չունենալու պատճառով, այդուհանդերձ, ոչ կանոնադրական հարաբերությունները և զինվորների նկատմամբ ոտնձգությունները, ըստ կարևորության, բանակի հզորացման հարցում 4-րդ տեղում են (17.9%), անգամ հայրենասիրական ոգի դաստիարակությունն ավելի կարևոր է համարվել (21.9%):

ԲԱՆԱԿԸ ՀՉՈՐԱՑՆԵԼՈՒ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գծապատկեր 4.3



Ընդհանրացնելով՝ կարող ենք նշել, որ ռազմականացված ընկալումները գերիշխում են հզոր բանակի մասին երիտասարդների ընկալումներում. սպառազինությունների ավելացում, ծառայողների թվի ավելացում և հայրենասիրական ոգու դաստիարակում, գումարային այս առաջնահերթությունները կարևորվում են երիտասարդների կեսից ավելիի մոտ (55%):

Ծայրահեղ ռազմականացված մտածողության դրսևորումներից մեկն էլ իզական սեռի հարցվողների բանակում ծառայելու մղումն է: Հարցվածների 62.3%-ը համաձայն է այն դրույթի հետ, որ «Հայաստանի աշխարհագրական դիրքն այնպիսին է, որ նաև կանայք պետք է սովորեն զենք գործածել»: Դրա մասին են վկայում ինչպես հարցման արդյունքները, այնպես էլ՝ քննարկումների ընթացքում հնչեցված մոտեցումները:

«Ես ահավոր ափսոսում եմ, որ Հայաստանում աղջիկները չեն ծառայում: Ցանկությունս շատ մեծ է, բայց քեռիս չի թողնում: Ուզում եմ պատրաստ լինել պատերազմին: Ես ու քույրս շատ ենք ուզում ծառայել, բայց եղբայրս չէի ուզենա, որ ծառայեի, նա պետք է խորանա գիտության մեջ»:
(իզական, 19 տ., Երևան)

«Հնարավոր է՝ աղջիկներն էլ ծառայեին, թեև հասարակության կողմից լավ չի ընկալվում դա: Եթե դա չլիներ՝ հաստատ կգնայի»:
(իզական, 21 տ., Գեղարքունիք, գ. Նորատուս)

«Ես ինքս, որ տղա լինեի՝ կծառայեի, քանի որ կուզեմ ինքս պաշտպանել իմ հարազատներին, ընտանիքիս: Գոնե զուտ երկրիս համար մի բան արած լինելու համար, որ ավելի կոփված լինեմ, ավելի վստահություն ձեռք բերեմ»:
(իզական, 22տ., Լոռի, գ. Մարգահովիտ)

«Ցանկացած տղա պետք է ծառայի, ինչքան էլ ապահովված չլինեն պայմանները: Ես էլ կծառայեմ: Պատերազմի ժամանակ էլ առաջին գիծ կգնամ»:
(իզական, 20տ., Տավուշ, ք. Իջևան)

Ձինված ուժերի մասին պատկերացումներն ամբողջացնելու նպատակով հարցվողներին առաջարկվել է արտահայտել մի քանի պնդումների հետ իրենց համաձայնության կամ անհամաձայնության աստիճանը: Առանձնացնենք մի քանի ուշագրավ թվեր ստորև բերված Աղյուսակ 4.3-ից: Հարցվածների 61%-ը գտնում է, որ «Հայաստանն ունի ամենամարտունակ բանակը Հարավային Կովկասում»: Չնայած սոցիալական ծանր վիճակին և աղքատության բարձր ցուցանիշներին, այնուամենայնիվ, հարցված երիտասարդների ավելի քան 80%-ը (52.5% և 28.3%) գտնում է, որ «Բանակին և սպառազինություններին ուղղվող պետական միջոցները պետք է ամեն տարի ավելացվեն» և մոտ 50%-ը (24.8% և 25.4%) կարծում է, որ «Բանակում ծառայող սպայական կազմին պետք է տրվեն զգալի սոցիալական արտոնություններ (բնակարան, բարձր աշխատավարձ/թոշակ)», ինչը ևս ենթադրում է հավելյալ միջոցներ պետական բյուջեից: Երիտասարդների 74.6%-ը (39.6% և 35.0%) գերադասում է չիմանալ բանակի իրական վիճակի մասին՝ համաձայնելով «ՀՀ բանակում առկա խնդիրները և միջադեպերը չպիտի բարձրաձայնվեն, քանի որ դա բացասաբար է ազդում բանակի հեղինակության վրա» դրույթի հետ: Եվ վերջին դատողությունը, որը հակասության մեջ է մտնում առաջին պնդման հետ, որ ՀՀ-ի բանակն ամենահզորն է տարածաշրջանում. հարցվածների 62.9%-ը գտնում է, որ «Հայաստանի նման փոքր երկրների անվտանգությունը պետք է երաշխավորվի և ապահովվի այլ՝ հզոր երկրների կողմից»:

Բանակի մասին ընկալումներն ամբողջացնելու տեսանկյունից վերջին դիտարկումը կարելի է անել քննարկումների արդյունքների վերլուծության հիման վրա: Պարադոքսային է, սակայն ռազմականացված գիտակցության տրամաբանության մեջ տեղավորվում է այն մոտեցումը, որ չնայած նրան,

Աղյուսակ 4.3 Արտահայտեք Ձեր համաձայնության կամ անհամաձայնության աստիճանը հետևյալ դատողությունների հետ

	Լիովին համաձայն եմ	Որոշ չափով համաձայն եմ	Որոշ չափով համաձայն չեմ	Բոլորովին համաձայն չեմ	ԳՊ
Հայաստանն ունի ամենամարտունակ բանակը Հարավային Կովկասում	18.3	42.7	21.7	14.0	3.3
Բանակին և սպառազինություններին ուղղվող պետական միջոցները պետք է ամեն տարի ավելացվեն	52.5	28.3	11.7	4.2	3.3
Բանակում ծառայող սպայական կազմին պետք է տրվեն զգալի սոցիալական արտոնություններ (բնակարան, բարձր աշխատավարձ/թոշակ)	24.8	25.4	20.6	27.7	1.5
ՀՀ բանակում առկա խնդիրները և միջադեպերը չպիտի բարձրաձայնվեն, քանի որ դա բացասաբար է ազդում բանակի հեղինակության վրա	39.6	35.0	12.9	10.8	1.7
Հայաստանի նման փոքր երկրների անվտանգությունը պետք է երաշխավորվի և ապահովվի այլ՝ հզոր երկրների կողմից	25.4	37.5	19.0	16.7	1.5

«Չեմ ցանկանա, որ եղբայրս ծառայի, որովհետև դժվարություններ է տեսնելու, չգիտես՝ ողջ կլինի, թե՛ չէ, էնտեղ ամեն ինչ թաքցնում են ... պատճառները (սպանության-խմբ...)... Բայց, որ ամեն մեկն այդպես մտածի, մենք մեզ ապահով չենք զգա, ու ապահով հայրենիք չի լինի: Այնուամենայնիվ, բոլոր դժվարություններով հանդերձ, ծառայությունը ճիշտ բան է: (իզական, 20 տ., Երևան)

«Դժվար է. անապահով են սահմանները, հազար ու մի հիվանդություն են ստանում զինվորները, հաշմանդամ դարձած գալիս, բայց կոփվում են, տղամարդ դառնում»:
(իզական, 20տ., Տավուշ, գ. Սևբար)

«Պետք է ծառայել հայրենիքի համար, ուղղակի մյուս կողմից էլ նայում ենք՝ ապահովված չի անվտանգությունը, միանշանակ դեմ կլինեի, որ գնար ծառայեր, բայց դե մյուս կողմից էլ հայրենիքն է պաշտպանում»:
(իզական, 21տ., Տավուշ, ք. Իջևան)

«Եղբայրս մի քանի տարուց ծառայելու է, և ես շատ ուրախ եմ դրա համար: Ցավոք երբեմն սպաները շահագործում են իրենց պաշտոնը: Ճիշտ է, որոշակի խնդիրներ կլինեն բանակում, բայց դե տղամարդը պետք է հաղթահարի այս ամենը»:
(իզական, 20տ., Տավուշ, ք.Իջևան)

«Բանակը մարդուն կոփելու տեղ է, թեև կատարվող ողբերգական դեպքերն ահազանգի նման են»:
(իզական, 21 տ., Գեղարքունիք, ք.Գավառ)

որ երիտասարդները փաստում են բանակում անվտանգության և կյանքի երաշխիքների բացակայությունը, այդուհանդերձ, նրանք գտնում են, որ պետք է ծառայել անգամ կյանքի գնով:

Ինչպես քանակական տվյալների, այնպես էլ քննարկումների արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս մի քանի եզրահանգումներ անել՝ հիմնվելով վերը շարադրվածի վրա:

Հիմնական եզրահանգումն այն է, որ երիտասարդների մեծամասնության ընկալումները հատուկ են ռազմականացված հասարակության ներկայացուցիչներին: Այդ մասին են վկայում մի քանի փաստեր: Նախ՝ իզական սեռի կողմից պատանիներին բանակում ծառայել պարտադրելը և իրենց իսկ ձգտումը նույնն անելու: Ռազմականացված մոտեցման մասին է խոսում նաև բանակի հզորացման ուղիների վերաբերյալ պատկերացումները. սպառազինությունների և ծառայողների ավելացում, կարգապահության և հայրենասիրական ոգու բարձրացում... Մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը այս շարքում նախավերջին տեղում է: Ի հավելումն սրա՝ երիտասարդների երեք քառորդը գտնում է, որ բանակի խնդիրների և տեղի ունեցող միջադեպերի մասին պետք չէ խոսել, դրանք բարձրաձայնել: Այս ամենից զատ՝ այս եզրահանգումն ապացուցում է նաև այն, որ, չնայած ներկայիս սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներին, երիտասարդների ծանրակշիռ մեծամասնությունը՝



չորս հինգերորդը, գտնում է, որ պետք է տարեցտարի ավելացնել բանակին և սպառազինություններին ուղղվող պետական միջոցները՝ դրանով իսկ սպասարկելով սպառազինությունների մրցավազքի մոտեցումը, որն էլ, իր հերթին, բնորոշ է ամենառազմականացված հասարակարգերին: Վերլուծությունն ի հայտ է բերում նաև երիտասարդների մոտեցումների և ընկալումների մեջ մի շարք հակասություններ և պարադոքսեր: Դրանցից ամենացայտունը կարելի է համարել այն, որ, չնայած երիտասարդների կողմից բանակում, անգամ կյանքի անվտանգության երաշխիքների մասին խնդիրների հիշատակմանը, այդուհանդերձ, նրանց երկու երրորդը պատրաստ է ծառայել բանակում, ընդ որում՝ այդ խմբում գերակշիռ մաս են կազմում բանակում ծառայություն անցածները:

Երիտասարդների զգալի մասը պատրաստ չէ ծառայելու բանակում որպես պարտավորություն պետության հանդեպ, մինչդեռ պատերազմի դեպքում նրանք պատրաստ են մեկնել ռազմի դաշտ: Սրանով նրանք իրենց հակադրում են իշխանություններին՝ համարելով, որ պետությունը չի երաշխավորում իրենց անվտանգ և պատշաճ պայմաններում ծառայությունը: Կարելի է փաստել, որ երիտասարդների շրջանում կա միայն բացասական մոբիլիզացիայի ներուժ, այսինքն՝ նրանց շրջանում այս առումով տիրող տրամադրությունները կարելի է բնութագրել հետևյալ կերպ. «պատրաստ չեմ ծառայել բանակում հանուն պետության, բայց ընդդեմ թշնամու կզնամ պատերազմ»:


Մյուս եզրահանգումն այն է, որ երիտասարդների ընկալումները հզոր բանակի մասին բավականին կարծրացած են, առավելապես՝ համահունչ խորհրդային բանակի գաղափարախոսությանը, և հարցվածների գրեթե 2/3-րդը կողմ է բանակի ձևավորման պարտադիր սկզբունքին, և միայն 30%-ն է կողմ պայմանագրային, մասնագիտացված բանակին: Այսպիսով, քիչ չէ, որ բանակը հանդիսանում է կարծրացած, փոփոխությունների չտրվող մի կառույց, այնպես էլ, պետք է փաստել, որ երիտասարդների շրջանում ևս նման պահանջ չկա: Հնարավոր բացատրությունների շարքում կարելի է դիտարկել կարծիքը, որ ՀՀ-ն պրոֆեսիոնալ բանակ պահելու հնարավորություն չունի:

4.2 Լեռնային Ղարաբաղի հիմնահարց և անվտանգություն

Լ Ղ հիմնահարցը, հանդիսանալով չլուծված հակամարտություն, ներկայում հանդիսանում է անվտանգության զգացումը խաթարող ամենահիմնական գործոնը: Ուստի ուսումնասիրության շրջանակում ուսումնասիրվել է նաև Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը և նրա լուծման ճանապարհների վերաբերյալ երիտասարդների դիրքորոշումները, քանի որ այն Հայաստանի համար հանդիսանում է ոչ միայն արտաքին քաղաքականության ոլորտում առանցքային հարցերից մեկը, այլև մեծ ազդեցություն ունի երկրի ներքին սոցիալական-քաղաքական զարգացումների վրա:

Առաջին հերթին երիտասարդներին առաջարկվել է գնահատել, թե որքանով է հավանական Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորումը խաղաղ և ուժային ճանապարհներով: Խաղաղ, այսինքն բանակցային ճանապարհով, լուծում չի տեսնում, կամ քիչ հավանական է համարում հարցվածների 2/3-ից ավելին (16.3% և 51.5% համապատասխանաբար), և միայն հարցվածների 1/3-րդն է կանխատեսում լուծում բանակցային ճանապարհով. 25.2%-ը գտնում է, որ «հավանական է», իսկ 5%-ը համարում է «շատ հավանական»: Ուժային, պատերազմի միջոցով լուծումը «հավանական» կամ «շատ հավանական» է համարում հարցվածների կեսից ավելին (41.9% և 12.5% համապատասխանաբար) (Գծապատկեր 4.4):

ՈՐՔԱՆՈ՞Վ Է ՀԱՎԱՆԱԿԱՆ ԼՂ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ...




Գծապատկեր 4.4

«Ձեր կարծիքով, ե՞րբ կլուծվի Ղարաբաղի հիմնահարցը» հարցին երիտասարդների 1/4-րդը (25.6%) դժվարացել է պատասխանել, 17.5%-ը գտնում է, որ այն երբեք չի լուծվի: Հարցվածների 14.4%-ն ավելի լավատես է և համարում է, որ հիմնախնդիրը կլուծվի 5 տարվա ընթացքում, իսկ 19.6%-ը՝ «առաջիկա 5-10 տարվա ընթացքում»: Երիտասարդների 18.8%-ը մոտակա 10 տարում որևէ լուծման հեռանկար չի տեսնում:

ԵՐԲ ԿԼՈՒԾՎԻ ԼՂ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Գծապատկեր 4.5



Վերը նշված երկու հարցերի (հիմնախնդրի լուծման ուղիները և լուծման ժամկետները/հեռանկարը) համադրումը հետաքրքիր պատկեր է տալիս: Նախ դիտարկենք ստացված արդյունքները խաղաղ՝ բանակցային ճանապարհով լուծմանը տրված գնահատականների շրջանակներում: Ինչպես ակնհայտ երևում է Գծապատկեր 4.6-ից, խաղաղ ճանապարհով լուծում կանխատեսողների շրջանում («շատ հավանական է» կամ «հավանական է» պատասխանն ընտրած խումբը) ժամանակին զուգընթաց լավատեսությունը մարում է: Այսպես, «առաջիկա 10 տարում» բանակցային լուծում կանխատեսողները 34.4% են, մինչդեռ «ավելի քան 10 տարում» խմբում՝ 20.2%: Այս երկու փոփոխականների միջև կապի գործակիցը ևս վկայում է փոխկապվածության մասին¹⁸:


Միևնույն համադրումը ուժային ճանապարհով լուծում կանխատեսողների շրջանում ցույց է տալիս, որ «առաջիկա 10 տարում» լուծում կանխատեսողների շրջանում ուժային ճանապարհով հանգուցալուծում ակնկալողները փոքր-ինչ ավելի շատ են (65.4%), քան 10 տարուց ոչ շուտ լուծում ակնկալողները (63.3%):

Քանի որ խոսվում է խաղաղ՝ բանակցային ճանապարհով լուծման մասին, պետք է փաստել, որ անհնար է պատկերացնել այն առանց փոխզիջումների: Ուստի հետաքրքիր է դիտարկել նաև երիտասարդների դիրքորոշումը հնարավոր զիջումների մասին: Այդ նպատակով նրանց ուղղված «Ձեր կարծիքով, Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման նպատակով արդյոք

18. Pearson Chi-Square value =9.708 assumption significance =0.08

ՈՐՔԱՆՈ՞Վ Է ՀԱՎԱՆԱԿԱՆ ԼՂ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԽԱՂԱՂ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ...


Գծապատկեր 4.6



ընդունելի է հայկական զորքերի վերահսկողության տակ գտնվող որոշ տարածքների¹⁹ հանձնումը Ադրբեջանին՝ բացի Ղարաբաղից» հարցին տրված պատասխանների վերլուծության արդյունքում ստացվել է հետևյալ պատկերը:

ՈՐՔԱՆՈ՞Վ Է ՀԱՎԱՆԱԿԱՆ ԼՂ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ՈՒԺԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ...

Գծապատկեր 4.7




19. Խոսքն Արցախյան ազատամարտի ընթացքում ազատագրված 7 շրջանների մասին է. Քաշաթաղ (Լաչին), Քարվաճառ (Քելբաջար), Ակն (Աղդամ), Վարանդա (Ֆիզուլի), Կովսական (Չանգելան), Ջրական (Ջաբրաիլ), Սանասար (Կուբաթլի):

Որևէ տարածքային զիջում երիտասարդների, կողմից որպես փոխզիջման առարկա, բանակցային գործընթացում «միանշանակ ընդունելի չէ» 69.2 և «ավելի շուտ՝ ընդունելի չէ» 21 տոկոս հարցվածների համար: Միայն 5.2%-ն է «ավելի շուտ՝ ընդունելի» և 2.7%-ը՝ «միանշանակ ընդունելի» համարում հնարավոր փոխզիջումը (Գծապատկեր 4.8):

Ֆոկուս խմբային քննարկումները ևս ցույց են տալիս, որ երիտասարդները որևէ փոխզիջում չեն պատկերացնում՝ անգամ եթե ընդունում են բանակցային լուծման անհրաժեշտությունը:

ԱՐԴՅՈՔ ԸՆԴՈՒՆԵԼԻ Է ՀԱՅԿԱԿԱՆ ՉՈՐՔԵՐԻ ՎԵՐԱՀԱՎՈՂՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՈՐՈՇ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԱԴԻԲԵՋԱՆԻՆ

Գծապատկեր 4.8



«Բանակցային ճանապարհը ենթադրում է ինչ-որ զիջումներ, Հայաստանի կողմից զիջում չեն պատկերացնում»:
(արական, 18 տ., Երևան)

«Բացարձակ փոխզիջում չեմ տեսնում բանակցային ճանապարհով... որովհետև կա տարբերակ, որ Ղարաբաղը կարա լինի բացարձակ ինքնավար»:
(իգական, 19 տ., Երևան)

«Ես չգիտեմ, թե Հայաստանը Ղարաբաղի դիմաց ինչ կտա, բայց որ փոխշահավետ բան պետք է լինի՝ դա պատկերացնում եմ, որովհետև չի լինում պայմանագիր միակողմանի շահերով»:
(արական, 19 տ., Երևան)

Երիտասարդներից շատ քչերն են, որ պատկերացնում ու ընդունում են բանակցային, փոխզիջումային լուծումը՝ ընդունելով, որ այն ենթադրում է որոշակի զիջումներ նաև հայկական կողմից:

Հարցված երիտասարդների զգալի մասն ավելի ռադիկալ ու ռազմատենչ տրամադրություններ ունի: Գրեթե բոլոր նրանք, ովքեր ռազմական լուծում են տեսնում, այդ պարագայում վստահ են Հայաստանի հաղթանակի ամրապնդման, նույնիսկ՝ հավելյալ տարածքներ նվաճելու մեջ:

Սակայն, ինչպես ցույց են տալիս քննարկման արդյունքները, առանց Ռուսաստանի մասնակցության այդ հաղթանակները չեն պատկերացնում:

Ղարաբաղի հիմնահարցը քննարկելիս հաճախ շեշտվում է գերտերությունների դերը: Ընդ որում՝ Ռուսաստանի դերը երկակի է. թե՛ դրական, թե՛ բացասական է ընկալվում:

Մի կողմից Ռուսաստանը դիտվում է որպես հաղթանակի երաշխիք, մյուս կողմից նշվում է Ռուսաստանի կողմից հակամարտությունը շահարկելու (սեփական շահերից ելնելով) վտանգը:

Եվ վերջապես, երբ խոսվում է լուծման մասին, հետաքրքիր է իմանալ, թե ինչ է հասկացվում լուծում ասելով՝ Ղարաբաղի հետագա կարգավիճակի տեսանկյունից: Այս հարցի շուրջ երիտասարդները տարակարծիք են:

Մի մասը գտնում է, որ լուծումը Ղարաբաղի միավորումն է Հայաստանի հետ, մյուս մասը համարում է, որ Ղարաբաղը պետք է լինի ինքնավար, անկախ պետություն:

Ամփոփելով՝ նշենք, որ հնարավոր պատերազմի թույլատրելիության մասին պատկերացումները երիտասարդների մոտ հակասական են: Մի մասը գտնում է, որ պատերազմն անթույլատրելի է և ոչ մի տարածք/հաղթանակ չի կարող արդարացնել հնարավոր զոհերի հնարավորությունը, մյուս մասը կարծում է, որ ամեն գնով պետք է պաշտպանել Ղարաբաղը:

«Այդ խնդրի լուծումը մոտակա տարիներին չեմ տեսնում, դա կարող է լինել այն պարագայում, երբ Հայաստանը Ադրբեյջանին վերադարձնի իր տարածքներն ու բանակցային ձևով, կարծում եմ, հնարավոր չէ: Եթե հնարավոր լիներ՝ արդեն լուծված կլիներ»:
(իզական, 21 տ., Լոռի, գ. Մարգահովիտ)

«Խաղաղ ճանապարհով դա կլինի միայն տարածքների փոխանակման տարբերակով, իսկ ես միանշանակ դեմ եմ»:
(իզական, 21տ., Իջևան, ք. Տավուշ)

Շատ լարված է, չենք կարող ասել: /.../ Ջոհեր չլինեն՝ լավ կլինի:
Փոխզիջումը կարևոր է:
(արական, 18 տ., Տավուշ, գ. Սևքար)

«Այսպես բանակցություններով ոչ մի բանի չենք հասնի: Միայն կռվի միջոցով: Հաղթող դուրս կգանք: Մենակ չի լինի, Ռուսաստանը կօգնի, քանի որ իրեն հարմար է մեզ օգնելը:
(արական, 23տ., Տավուշ, ք. Իջևան)

«Եթե հարցն այսքան ձգձգվում է՝ խաղաղ չի լուծվի: /.../ Եթե լուծում լիներ, այսքան չէին քաշքշի: Թող պատերազմ լինի, միանգամից որոշեն»:
(իգական, 22, Գեղարքունիք, գ. Նորատուս)

«Չգիտեմ երբ կլուծվի, բայց պատերազմական ճանապարհով կլուծվի, ու Ղարաբաղը պետք է լինի Հայաստանի կազմում, մենք պետք է պատերազմով ճնշենք, բանակցություններով չի համաձայնվի»:
(արական, 18 տ., Լոռի, գ. Մարգահովիտ)

«Տարածքներ կան, որ Ադրբեջանին են եղել, բայց չպիտի տանք: Լուծումը տեսնում եմ ռազմական ճանապարհով, բայց եթե Ռուսաստանը մեզ հետ է, ու պետք է ավելի շատ տարածք գրավենք»:
(արական, 18տ., Լոռի, գ. Մարգահովիտ)

«Հայ-ադրբեջանական կոնֆլիկտը չի լուծվում, քանի որ Ռուսաստանին ձեռք է տալիս նման կոնֆլիկտային վիճակը Կովկասում: Նա ուզում է հնարավորինս շատ երկրներ ներառի իր տիրապետության տակ»:
(իգական, 25 տ., Լոռի, ք. Վանաձոր)

«Ադրբեջանին շատ օգնող երկրներ կան, օրինակ՝ Ամերիկան: Եթե Ռուսաստանը ցանկանա, կլուծի այդ հարցը բանակցային ճանապարհով: Ադրբեջանը չի կարող չենթարկվել: Ուրեմն Ռուսաստանը Ամերիկայի հետ պիտի համաձայնության գա»:
(իգական, 21 տ., Գեղարքունիք, գ. Նորատուս)

«Ես լուծումը տեսնում եմ՝ Ղարաբաղը, որպես Հայաստանի մաս»:
(իգական, 18 տ., Երևան)

Այսպիսով, ամփոփելով վերը շարադրածը՝ կարող ենք մի քանի եզրահանգում անել: Առաջին հերթին պետք է նշել, որ երիտասարդների շրջանում առհասարակ չի դիտարկվում բանակցային ճանապարհով հիմնախնդիրը լուծելու պատրաստակամություն ու փոխզիջման ընկալում: Գրեթե 2/3-րդը կան ընդհանրապես լուծում, կան տեսանելի ապագայում լուծում չեն ակնկալում, կան էլ, առհասարակ, դժվարանում են որևէ կանխատեսում անել, և միայն 1/3-րդն է, որ լավատեսորեն է տրամադրված:

Թեև հարցվածների մոտ 30%-ը հավանական է համարում խաղաղ ճանապարհով ԼՂ հակամարտության լուծումը, բայց միևնույն ժամանակ տարածքային զիջումն անընդունելի է հարցվածների գերակշիռ մասի համար (90.2%):

Շատ հակասական են երիտասարդների պատկերացումները «լուծում» ասվածի վերաբերյալ, միակարծիք չեն ԼՂ հետագա ճակատագրի հարցում:

«Չեն էլ ուզենա, որ լուծվի, քանի որ այս իրավիճակը լավ է մեծ պետությունների համար: Խառնաշփոթում հեշտ ես կառավարում»:
(արական, 21 տ., Տավուշ, ք. Իջևան)

«Ուժային ճանապարհով կստանա լուծում, բայց այդ դեպքում էլ արդեն միայն Հայաստան-Ադրբեջան չեն լինի այդտեղ, Ռուսաստանը կլինի մի կողմից, բայց ոչ Հայաստանի»:
(իգական, 21տ., Տավուշ, ք. Իջևան)

«Ղարաբաղի հարցը չի լուծվելու ընդհանրապես: Չեմ պատկերացնում լուծումը, ինչքան էլ գրավենք Ղարաբաղը, էլի ռուսները տալու են ադրբեջանցիներին, ոնց որ անցած անգամ նվեր տվեցին: Կովի միջոցով էլ՝ զոհեր շատ կլինեն, հայ չի մնացել, ինչ զոհ»:
(արական, 21 տ., Տավուշ, ք. Իջևան)

«Ռազմականը մեզնից կախված չի, որովհետև մեր կողմն ասում է, որ մենք չենք ուզում պատերազմ, բայց եթե եղավ, վերջնական հարված է լինելու մեր կողմից:
Ես, բնականաբար, կողմ եմ բանակցայինին, որովհետև ոչ մեկին պետք չի զոհ, ոչ մի ընտանիք չպետք է ունենա կորցրած զինվոր...»
(արական, 18տ., Երևան)

«Թե ինչ ճանապարհով կարող է լինել՝ այդքան էլ վստահ չեմ, բայց իմ համար առանց պատերազմ ավարտ պետք է լինի, որովհետև ցանկացած պատերազմների ես դեմ եմ. այն արժեքը, որ ներկայացնում է, ինքն իրենով կկորչի ինձ համար այն դեպքում, երբ դա մարդկային զոհեր պահանջի»:
(իգական, 18տ., Երևան)

«Եթե Ղարաբաղը տանք, ուրեմն մեր զոհերն անհիմաստ են եղել: Ասում են՝ որդուդ տուր, հողդ մի տուր»:
(արական, 18տ., Տավուշ, գ. Սևքար)

Մի մասը ԼՂ-ն տեսնում է որպես անկախ հանրապետություն, մյուս մասը՝ միայն ՀՀ կազմում:

Ինչպես ցույց են տալիս քննարկումների արդյունքները, գերակշռում են ռադիկալ տրամադրությունները Ադրբեջանին ներկայիս ստատուս-քվոն պարտադրելու հարցում: Երիտասարդները վստահ են, որ կարող են պատերազմական ճանապարհով հարցը լուծել, սակայն, միայն թե, Ռուսաստանի աջակցությամբ:

Եվստ հակասական են նաև ԼՂ հակամարտության լուծման ուղիների նկատմամբ ՌԴ շահագրգռվածության մասին պատկերացումները: Մի մասը վստահ է, որ Ռուսաստանը Հայաստանի դաշնակից բարեկամն է, մյուս մասը կարծում է, որ Ռուսաստանը ԼՂ հակամարտությունն օգտագործում է որպես խաղաքարտ/լծակ Հայաստանին կախվածության մեջ պահելու և իր աշխարհաքաղաքական/տարածաշրջանային խնդիրները լուծելու համար:

5. Մարդու իրավունքների արժեքը և դրանց սահմանների ընկալումը

Հ Սահմանադրությամբ ամրագրված են մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքներն ու ազատությունները՝ որպես իրավական պետության կարևորագույն մաս: Սակայն իրավական պետության կայացումը հնարավոր է միայն, եթե քաղաքացիները համապատասխան իրավական մշակույթի կրողներն են:

Պետություն-քաղաքացի փոխհարաբերությունների վերաբերյալ ընկալումներն ամբողջացնելու նպատակով սույն բաժնում կվերլուծենք հարցվածների կարծիքները մարդու իրավունքների մասին: Այս բաժնում ներառված են հարցեր ինչպես գիտելիքների, դիրքորոշումների, այնպես էլ՝ սուբյեկտիվ ընկալումների վերաբերյալ:

Առաջին հերթին անդրադառնանք այն հարցին, թե որքանով են պաշտպանված զգում իրենց երիտասարդներն օրենքի տեսանկյունից: Այս, թեև սուբյեկտիվ, սակայն ամենախոսուն ընկալումն առանցքային է, քանի որ հանդիսանում է իրավական պետության կայացվածության մասին վկայող ամենակարևոր ցուցանիշներից մեկը՝ անկախ նրանից, թե ինչ իրավական հիմքեր կան և ինչպես են դրանք իրագործվում կյանքում:

Այս հարցին պատասխանելիս հարցվածները հիմնականում խուսափել են բացարձակ գնահատականներից և միջանկյալ գնահատականներ են տվել: Այնուամենայնիվ, եթե դիտարկենք և համեմատենք այս հարցին ծայրահեղ գնահատական տված պատասխանները, պետք է նշել, որ «բոլորովին անպաշտպան» զգացողների թիվը երկու անգամ ավելի է իրենց «միանգամայն պաշտպանված» համարողներից, համապատասխանաբար՝ 19% և 8.5%: Իրենց իրավական պաշտպանվածությանը միջանկյալ գնահատականներ տվողների թվում ևս կա, թեև ոչ նշանակալի, սակայն տարբերություն. «ավելի շուտ անպաշտպան» պատասխանողների թիվը 5.4%-ով ավելի է «ավելի շուտ պաշտպանված» կետը նշողների թվից: Իսկ ընդհանուր առմամբ՝ իրավական տեսակետից իրենց անպաշտպան զգացող երիտասարդների գումարային թիվը 15.9%-ով ավելի է իրենց պաշտպանված համարողներից (Գծապատկեր 5.1):


Նույն մոտեցումը դրսևորվել է ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում: Երիտասարդների մեծ մասը գտնում է, որ անպաշտպանության հիմքերը ոչ թե օրենսդրական դաշտի անկատարության մեջ է, այլ՝ Հայաստանում ձևավորված իրավունքի կիրառման պրակտիկայի:

Մարդու իրավունքների գիտելիքների վերաբերյալ այն հիմնարար՝ «նվ պետք է երաշխավորի մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը» հարցին տված պատասխանները թույլ են տալիս հասկանալ, թե երիտասարդները, որպես մարդ և որպես քաղաքացի, ում վրա են դնում իրենց իրավական անվտանգության համար




ՈՐՔԱՆՈ՛Վ ԵՆ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԶԳՈՒՄ ԻՐԵՆՑ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՆ ՕՐԵՆՔԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԻՑ

Գծապատկեր 5.1



պատասխանատվությունը: Առաջադրված յոթ տարբերակներից մեկն ընտրելով՝ հարցվածների միայն 36.3%-ն է տվել ճիշտ պատասխան, այն է՝ «պետությունը»: Թեև այս ճիշտ տարբերակն ամենաշատ թվով պատասխաններ է հավաքել մյուսներից, սակայն զգալի մաս են կազմում նաև այնպիսի անսպասելի պատասխաններ, ինչպիսիք են «մարդն ինքը» (24.2%), «մարդու իրավունքների պաշտպանը» (19.4%) և այլն, ինչը վկայում է այն մասին, որ հարցված երիտասարդների գրեթե 2/3-ը մարդու իրավունքների էության վերաբերյալ պատշաճ գիտելիքներ չունի (Գծապատկեր 5.2):

Ո՛Վ ՊԵՏՔ Է ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ



«Օրենքով որոշ չափով ապահովված զգում եմ, բայց կաշառակերությունն է տարածված, որ առանց փողի ոչինչ հնարավոր չէ անել, հավասարություն չկա»:

(արական, 18 տ., Լոռի, գ. Մարգահովիտ)

«/.../իրավահավասարության իրավունքն է խախտվում, օրենքով բոլորը հավասար են, բայց գործնականում դա այդպես չէ»:

(իգական, 24 տ., Լոռի, գ. Մարգահովիտ)

«Մենք տեղեկացված չենք մեր իրավունքներից, չենք հավատում, որ նրանք կպահպանվեն: Նույնիսկ եթե գիտենք էլ, մեկ է՝ խախտվում են»:

(արական, 21 տ., Լոռի, ք. Վանաձոր)

«Օրենքը հավասար չի գործում: Պաշտոնյայի որդին և սովորական մարդը նույն կերպ չեն պատժվում»:

(արական, 20 տ., Տավուշ, գ. Սևքար)

Այն, որ հարցվածներից յուրաքանչյուր չորրորդը գտնում է, որ ինքն է իր իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխավորը, մի կողմից վկայում է նրա մասին, որ չկա ՄԻ էության ճիշտ ընկալում, մյուս կողմից խոսում է պետական կառույցների նկատմամբ անվստահության մասին: Պետությունից օտարվածությամբ և անվստահությամբ է պայմանավորված, որ երիտասարդները ապավինում են հիմնականում իրենց ուժերին: Այն գաղափարը, որ մարդու իրավունքները պատկան մարմինների կողմից խախտվում են այն պատճառով, որ մարդիկ չգիտեն իրենց իրավունքները, հաճախակի շեշտվում է ֆոկլուս խմբային քննարկումների ժամանակ:

Հիմնվելով ՀՀ սահմանադրության մեջ ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների մասին շարադրանքից՝ հարցման շրջանակներում երիտասարդներին առաջարկվել է գնահատել, թե իրավունքներից որոնք են առավել հաճախ խախտվում Հայաստանում: Պետք է նշել, որ յուրաքանչյուր իրավունքին տրված էր բացատրություն՝ առավել ճիշտ ընկալման համար և յուրաքանչյուր հարցվող կարող էր նշել առավելագույնը երեք տարբերակ: Ստացված արդյունքները վկայում են, որ հարցված երիտասարդներն առավել հաճախ փաստում են երկու իրավունքների խախտման մասին՝ արդար դատաքննության (57.9%) և խոսքի ազատության (49.8%):

Հարցվածների միայն 4.4%-ն է գտնում, որ ՀՀ-ում մարդու ոչ մի իրավունք չի խախտվում (Գծապատկեր 5.3):

Արդար դատաքննության իրավունքը հանդիսանում է պետության պոզիտիվ պարտավորություններից հիմնականը, որը հնարավորություն է տալիս վերականգնել մարդու ունեցած իրավունքները և ազատությունները: Արդար դատաքննության իրավունքի խախտման մասին փաստումը համահունչ է մյուս հարցին տրված պատասխանների հետ. նույնքան բարձր տոկոս են կազմում իրենց իրավական տեսանկյունից բոլորովին կամ մասամբ անպաշտպան համարողները՝ մոտ 60%:


«Գրված օրենքով ես ինձ լավ եմ զգում, բայց մենք բոլորս էլ գիտենք, որ օրինակ՝ մեծահարուստները կարող են խախտել օրենքները, ու որոշ չափով ես ինձ պաշտպանված զգում եմ ու մտածում եմ՝ ամենաշատը այսօր խախտվում են իրավական իրավունքները, որ օրինակ՝ ոստիկանները բռնում են ու, եթե մեղավորը մեծահարուստի տղա է, նրա հայրը կարող է նրան հանել, իսկ նա, ով անմեղ է ու աղքատ, կարող է դատվել»:
(արական, 18 տ., Լոռի, գ. Մարգահովիտ)

«Մարդու տուն գողություն է կատարվել, մարդը ոստիկանություն է դիմում, բայց ամեն ինչ շրջում են ու մարդն է տուժում, իր գլխին են սարքում, արդարադատության իրավունքն է խախտվում»:
(իգական, 19 տ., Տավուշ, ք. Իջևան)

«Մեծ մասամբ շատ են խախտվում մարդու իրավունքները, բայց դա գալիս է հենց մարդկանցից. շատ հանդուրժող են և չեն դիմում համապատասխան մարմիններին»:
(արական, 25 տ., Տավուշ, ք. Իջևան)

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ ՈՐՈՂՔ ԵՆ ԱՌԱՎԵԼ ՀԱՃԱԽ ԽԱԽՏՎՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Գծապատկեր 5.3



Ժողովրդավարության և իրավական պետության հիմնական սկզբունքն է այն, որ բոլոր քաղաքացիները հավասար են օրենքի առջև: Այն սերտորեն կապված է օրենքի գերակայության սկզբունքի հետ: Արդարադատությունը չպետք է հաշվի առնի իր առջև կանգնածի ծագումը, ուժը, ապահովվածությունը, սոցիալական դիրքը և այլն: Խտրականության դրսևորումները շեշտվում էին բոլոր քննարկումների ժամանակ, նշվում էին քաղաքական դիրքորոշումներով և պատկանելությամբ պայմանավորված խտրականության դրսևորումներ:

Երիտասարդների զգալի մասը չի պատկերացնում, թե ովքեր են մարդու իրավունքների պաշտպանության սուբյեկտները և օբյեկտները, և մարդու կյանքի ռիսկոս իրավահարաբերություններն են, որ կարգավորվում են մարդու իրավունքների պաշտպանության ներքո: Դրա մասին են վկայում ֆոկլուս խմբային քննարկման ժամանակ հնչեցված օրինակները:

Պետք է նշել ևս մի հետաքրքրական դիտարկում, որն արվել է ֆոկլուս խմբային քննարկումների ժամանակ. մարդու իրավունքների խախտումների մասին խոսելիս մարզային քննարկումներում ավելի շեշտադրվում էին սոցիալական և տնտեսական իրավունքները, մինչդեռ Երևանում ավելի շատ խոսվում էր քաղաքացիական և քաղաքական իրավունքների խախտման մասին:

Եվ վերջին հարցը, որ դիտարկվել է այս բաժնում, ՄԻ սահմանափակումն է: Համաձայն միջազգային և ազգային իրավունքի՝ Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակում հնարավոր է, եթե դրա նպատակներն ու հիմքերն ամրագրված են օրենքով, և ժամանակավոր բնույթ է կրում: Հարցվածներին տեսականորեն «դեմ» և «կողմ» խմբերի բաժանելու նպատակով, նրանց առաջարկվել է արտահայտել իրենց համաձայնությունը կամ անհամաձայնությունը մարդու իրավունքների

«Մեզ մոտ բոլոր պետական տեղերում աշխատողները պետք է լինեն հանրապետական, կամ ուսանողների իրավունքներն են խախտվում քննությունների ժամանակ. ովքեր գումար չեն տվել՝ ստանում են ավելի ցածր, քան տվողները: Կամ կոնկրետ մեզ մոտ եղել է կուսակցության մեջ ներգրավելու խնդիրը, օրինակ, եթե մենք ուսխորհրդի անդամ ենք և ցանկանում ենք որևէ տեղ գնալ, որը իրենք են ֆինանսավորում, պետք է լինենք հանրապետական կուսակցության անդամ»:
(Իգական, 21 տ., Լոռի, գ. Մարգահովիտ)


«Տարբեր աշխատատեղեր կան, որոնք քաղաքականացված են, և աշխատողներին ստիպում են ընտրությունների ժամանակ ընտրել տվյալ թեկնածուներին»:
(Իգական, 23 տ., Տավուշ, ք. Իջևան)

«Խոշտանգման իրավունքը. ասենք մարդուն բռնում-տանում են բաժին, ու պետք է խոստովանի, դա չի լինում բնական ձևով. էնտեղ խոշտանգում են, որ խոստովանի»:
(արական, 18 տ., ք. Երևան)


սահմանափակման վերաբերյալ երկու կատեգորիկ դատողության հետ: Արդյունքում, հարցվածների 1/3-ը գտնում է, որ մարդու իրավունքները երբեք որևէ հանգամանքում չպիտի սահմանափակվեն, իսկ 2/3-ը կարծում է, որ լինում են իրավիճակներ, երբ մարդու որոշ իրավունքներ կարող են սահմանափակվել (Գծապատկեր 5.4):

ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ Է ԱՐԴՅՈՔ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ

Գծապատկեր 5.4



ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՐԲԵՔ, ՈՐԵՎԷ ՊԱՏՃԱՌՈՎ ՉՊԵՏՔ Է ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԵՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ



ԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ, ԵՐԲ ՈՐՈՇ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԵԼ

«Երեխաների իրավունքները ևս խախտվում են, ծնողը խփում է: Ոստիկանական նորմալ համակարգ չկա: Մեր իրավունքները խախտվում են մեր քաղաքում, քանի որ աղբարկղեր չկան: Ես պայքարել եմ իմ իրավունքի համար, և հասել եմ իմ ուզածին, օրինակ՝ Թռչկանը»:
(արական, 24 տ., Լոռի, ք. Վանաձոր)

«Խախտված է մարդու առողջ ապրելու իրավունքը: Բուժսպասարկումից օգտվելու իրավունքը, քանի որ պետպատվերի ժամանակ միշտ չէ, որ բուժումն իրականացվում է անվճար և պատշաճ որակի: Կրթական իրավունքը ևս խախտված է, կոռուպցիա, կաշառք շատ կա»:
(իգական, 20 տ., Տավուշ, ք. Իջևան)

«Բացի նշվածներից՝ կավելացնեմ ազատ հանրահավաքներ անցկացնելու իրավունքը, որ ինքը իրավունք ունի հանրահավաք անցկացնելու ու իր բողոքն արտահայտելու այս կամ այն դեպքի վերաբերյալ: Հայաստանում դա ամենախախտվող իրավունքն է»:
(արական, 18 տ., ք. Երևան)

Պետության կողմից մարդու իրավունքներին միջամտության սահմանների որոշման հարցն ամենաբարդ և վիճելի խնդիրներից մեկն է մարդու իրավունքների ոլորտում: Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման իրավաչափության վերաբերյալ չկան հստակ սահմանված չափանիշներ՝ ամրագրված իրավական նորմերի տեսքով, և հաճախ հղում է արվում ՄԻ Եվրոպական դատարանի կողմից քննված նախադեպերին:

Որպես հարցի տրամաբանական շարունակություն՝ հետաքրքիր է դիտարկել, թե ինչ են մտածում երիտասարդները մարդու իրավունքների սահմանափակումների մասին: Ո՞ր հանգամանքներն են, որ ընդունելի են հարցվածների համար՝ որպես սահմանափակման հիմք, ինչը խոսում է հարցվածների համար տվյալ իրավիճակի կամ խնդրի կարևորության մասին: Արդյունքում, հարցվածների գրեթե կեսը նշել է երկու իրավիճակ. «ռազմական գործողությունների ժամանակ» (49.6%) և «արտակարգ դրության ժամանակ» (47.5%): Երկու իրավիճակն էլ, հիմնականում, արտաքին սպառնալիքներից պաշտպանության համար է: Զգալի մաս է կազմում «քաղաքացիների անվտանգությունն ապահովելու համար» տարբերակը (36.7%), ինչը ևս առնչվում է վերոնշյալ իրավիճակներին (Գծապատկեր 5.5):

Սա վկայում է այն մասին, որ երիտասարդների մոտ բավական արդիական է ռազմական ագրեսիայից պաշտպանության խնդիրը: Իսկ հարցվածների 23.1%-ը կրկին հաստատում է նախորդ հարցում իրենց արտահայտած դիրքորոշումը, որ «մարդու իրավունքները չեն կարող սահմանափակվել ոչ մի դեպքում»:

Այսպիսով, ամփոփելով վերը շարադրվածը՝ առանձնացնենք մի քանի առանցքային դիտարկում: Երիտասարդների զգալի մասը թերի գիտելիքներ, արդյունքում՝ թյուր ընկալումներ ունի ՄԻ վերաբերյալ: Երիտասարդները չեն պատկերացնում, թե ովքեր են մարդու իրավունքների պաշտպանության սուբյեկտներն ու օբյեկտները, և մարդու կյանքի որ իրավահարաբերություններն են, որ կարգավորվում են մարդու իրավունքների պաշտպանության ներքո:

Այն, որ հարցվածներից յուրաքանչյուր չորրորդը գտնում է, որ ինքն է իր իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխավորը, մի կողմից վկայում է ՄԻ էության սխալ ընկալման, մյուս կողմից էլ՝ պետական կառույցների նկատմամբ անվստահության մասին: Պետությունից օտարվածությամբ և անվստահությամբ է պայմանավորված այն փաստը, որ երիտասարդներն ապավինում են, հիմնականում, իրենց ուժերին: Իսկ գաղափարը, որ մարդու իրավունքները խախտվում են պատկան մարմինների կողմից այն պատճառով, որ մարդիկ չգիտեն իրենց իրավունքները՝ գերակշիռ մոտեցում է երիտասարդների շրջանում:

Գրեթե 2/3-ն է փաստում, որ ՀՀ-ում արդար դատաքննության իրավունքը առավել հաճախ խախտվող իրավունքն է. սա վկայում է արդարության սրված պահանջի մասին: Մարդու բոլոր իրավունքներն ածանցվում են արդար դատաքննության իրավունքից կամ բխում են դրանից: Սա է պատճառներից հիմնականը, որ դատական համակարգի անգործության


պայմաններում երիտասարդները, չիմացությամբ կամ գիտակցաբար, որպես իրենց իրավունքների երաշխավոր տեսնում են ոչ թե պետությանը, այլ իրենց:

Երիտասարդների կեսը վկայում է խոսքի ազատության իրավունքի խախտման մասին, ինչից կարելի է ենթադրել, որ նրանք հիմնվում են իրենց իսկ փորձի վրա: Սրա հետ փոխկապակցված է նաև այն, որ քննարկումների ժամանակ շատ է խոսվում քաղաքական դիրքորոշումների հիմքով խտրականության մասին:

Հարցված երիտասարդների 3/4-րդը պատրաստ է մարդու իրավունքների սահմանափակումների պետության կողմից, և այդ սահմանափակումներն ընդունելի են առավելապես մարդկանց ֆիզիկական անվտանգությանն ուղղված սպառնալիքների դեպքում ռազմական գործողությունների և արտակարգ դրության ժամանակ:

Ո՞Ր ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՒՄ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԿՀԱՄԱՐԵՔ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ

Գծապատկեր 5.5



Եզրակացություններ

Հայաստանի առաջնահերթությունները երիտասարդների աչքերով

Ընդհանրացնելով, կարելի է փաստել, որ հարցված երիտասարդների աչքերում խնդիրներն, ըստ առաջնահերթության, դասակարգվում են հետևյալ կերպ. սոցիալական, անվտանգություն, իրավական պաշտպանվածություն և ինքնության պահպանում: Առաջնայինը սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներն են՝ գործազրկություն, գնաճ, աղքատություն: Անվտանգությանն առնչվող խնդիրները (այն է՝ զինվորների մահացության դեպքերը, պատերազմի վերսկսման հավանականությունը և ԼՂ հիմնահարցը) միասին վերցրած՝ երկրորդ տեղում են: Երրորդ տեղում իրավական պաշտպանվածությանն առնչվող խնդիրներն են՝ մարդու իրավունքների ոտնահարում, կոռուպցիա, հանցավորություն, ընտրությունների կեղծում: Ինքնության պահպանության խնդիրը (բարոյական, մշակութային արժեքների կորուստ, ազգային ավանդույթները մոռացության մատնելը, ցեղասպանության ճանաչում, այլ կրոնական կազմակերպությունների տարածում) չորրորդ տեղում է:

Վստահություն պետական և ոչ պետական կառույցների նկատմամբ

Երիտասարդների շրջանում իշխանական բոլոր կառույցները՝ ՀՀ Նախագահի գլխավորությամբ, ամենացածր վստահությունն են վայելում: Ի հակադրումն դրա՝ երիտասարդները գրեթե սրբացնում են եկեղեցին, բանակը և քննադատությունից վեր դնում այս կառույցները: Բանակին «վստահողների» և «չվստահողների» միջև կան նշանակալի տարբերություններ: Վստահողներին առավելապես բնորոշ են ավտորիտար, ռազմատենչ հասարակարգերին բնորոշ մոտեցումներ:

Աշխարհաքաղաքական նախընտրություններ. անվտանգություն, թե՛ տնտեսական զարգացում

Ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ԵՏՄ-ին անդամակցումն ընկալվում է ընդդեմ պատերազմի, ԵՄ-ին անդամակցումը՝ հանուն ՄԻ պաշտպանության և տնտեսության զարգացման հեռանկարի: Այսինքն՝ երիտասարդների համար առավել ընդունելի է այս պահին երկրի անվտանգությանն ուղղված սպառնալիքների պատճառով ունենալ թեև հեղիեղուկ, բայց երաշխիքներ, քան երկարաժամկետ հեռանկարում տնտեսության զարգացում ԵՄ շրջանակներում: ԵՏՄ-ն նախընտրողների տրամաբանությունը կարելի է արտահայտել հետևյալ նախադասությամբ. ավելի գերադասելի է անվտանգ գոյատևումն այսօր, քան տնտեսական զարգացման հեռանկարը՝ հեռավոր եւ ոչ այնքան տեսանելի ապագայում:

20. Հիմնախնդիրների ամբողջական ցանկը և ստացված տվյալները տես հավելված #1-ում:



Անվտանգության և դրա մարտահրավերների մասին ընկալումները

Այս բաժնում քննարկված հարցերն ավելի շատ նոր հարցեր առաջացրեցին, քան պատասխաններ տվեցին: Նշենք դրանցից մի քանիսը:

- Անվտանգության ամենամեծ սպառնալիքն այսօր երիտասարդների համար հանդիսանում է ամեն պահի վերսկսվելու հավանականություն ունեցող պատերազմը: Երկրորդ սպառնալիքը տնտեսական ոչ բարվոք վիճակն է:
- Չնայած բանակում տեղի ունեցող անցանկալի երևույթներին՝ այս կառույցի նկատմամբ մեծ վստահության կա: Միևնույն ժամանակ երիտասարդները բացասաբար են տրամադրված զինվորական ծառայության (որպես պետության հանդեպ պարտք), նկատմամբ, սակայն պատրաստ են մոբիլիզացվել ընդդեմ թշնամու՝ պատերազմի դեպքում:
- ԼՂ հակամարտության լուծման առնչությամբ ավելի ռազմատենչ տրամադրություններ են տարածված, քան խաղաղասիրական: Երիտասարդների ընկալումների մեջ առհասարակ չկա ԼՂ հակամարտության «լուծում» ասվածի վերաբերյալ ընդհանրական մոտեցում. տարբեր կերպ են տեսնում ԼՂ հետագա կարգավիճակը, ընդունելով բանակցային լուծման ճանապարհը՝ միեւնույն ժամանակ որևէ տարածքային զիջում չեն հանդուրժում: Շատերը կողմնակից են ռազմական ճանապարհով լուծման, սակայն բաց է մնում այն հարցը, թե ինչ են հասկանում այս պարագայում լուծում ասելով: Այս հակամարտությունում ՌԴ շահերի և մասնակցության վերաբերյալ երկակի և հակասական ընկալումներ կան երիտասարդների շրջանում:

Այս և մի շարք այլ հարցեր, այնուամենայնիվ, բաց մնացին և կարիք ունեն լրացուցիչ ուսումնասիրության:

Մարդու իրավունքների արժեքը և դրանց սահմանների ընկալումը

Ամփոփելով մարդու իրավունքների և դրա հետ կապված հարցերի ուսումնասիրությունը՝ կարելի է մի քանի հետևություն անել: Արձանագրվում է մարդու իրավունքների և ազատությունների հայեցակարգի համապարփակ ըմբռնման և տարրական գիտելիքների պակաս: Սակայն, չնայած այդ գիտելիքների պակասին, երիտասարդներն ընդունակ են հստակորեն ընկալել և ի ցույց դնել տարբեր հիմքերով խտրականության դրսևորումները: Այո, ՄԻ կոնցեպցիայի թյուր ընկալում կա, այնուհանդերձ, երիտասարդների մոտ արդարության և արդարադատության սրված պահանջմունք էլ կա: Զարմանալիորեն երիտասարդները ՄԻ խախտման մեջ պատասխանատվությունը իրենց վրա են դնում՝ պետությունից դրանց երաշխավորման հարցում պահանջատեր լինելու փոխարեն: Ի վերջո, ՄԻ սահմանափակումների նկատմամբ վերաբերմունքի միջոցով երևում է անվտանգության պահանջմունքի արդիականությունը. գերակշիռ մասը պատրաստ է ՄԻ սահմանափակումների՝ հանուն ֆիզիկական անվտանգության երաշխիքների:



ekhachatryan@peacedialogue.am;
mailbox@peacedialogue.am

<http://www.peacedialogue.am>
<http://www.safesoldiers.am>



twitter.com/peacedialogue



facebook.com/PeaceDialogue



youtube.com/user/PeaceDialogueNGO

© 2015, «Խաղաղության երկխոսություն»

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, 2002,
ք. Վանաձոր; Մյասնիկյան 12, բն. 40,
«ԽԵ» գրասենյակ;
Հեռ.՝ +374 (322) 21340;
Բջջ.՝ +374 (55) 820 632; (93) 820 632



ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Հարգելի՛ երիտասարդ,

«Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության կողմից «Ապահով գինվորներ՝ անվտանգ Հայաստանին» ծրագրի շրջանակներում իրականացվում է հեղափոխություն՝ ուղղված երիտասարդների շրջանում քաղաքական և քաղաքացիական դիրքորոշումների և արժեքների ուսումնասիրությանը:

Հարցումն անանուն է: Հայցում ենք անկեղծ պատասխաններ:

▪ **Որքանո՞վ եք Դուք հետաքրքրված Հայաստանի...**

	Ընդհանրապես հետաքրքրված չեմ	Ավելի շուտ հետաքրքրված չեմ	Ավելի շուտ հետաքրքրված եմ	Շատ հետաքրքրված եմ	ԴՊ
ներքաղաքական անցուղարձով	11.7 %	25.8 %	47.5 %	14.8 %	0.2 %
արտաքին քաղաքականությամբ	14.8 %	27.5 %	40.8 %	16.5 %	0.4 %

▪ **Ձեր կարծիքով, որո՞նք են այս պահին Հայաստանի համար ամենակարևոր խնդիրները: (նշել 3 փարբերակ ըստ կարևորության՝ 1-ից 3)**

	1-ին	2-րդ	3-րդ	գումարային %	կումուլյատիվ %
Գործազրկության բարձր մակարդակը	13.3	10	10	33.3	69.9
Աղքատության բարձր մակարդակը	10.2	12.3	9	31.5	64.2
Արտագաղթի ծավալները	12.3	8.8	9	30.1	63.5
Ոչ մարտական պայմաններում գինվորների մահացության դեպքերը	9	8.8	9.2	27	53.8
Մարդու իրավունքների խախտումները	6.7	4.2	7.3	18.2	35.8
Գնաճը	3.8	5.6	7.1	16.5	29.7
Պատերազմի վերսկսման հավանականությունը	5.2	5	4.8	15	30.4
Ղարաբաղի հիմնահարցը	5.4	5.2	2.7	13.3	29.3

Կրթության ցածր մակարդակը	3.8	3.5	5.4	12.7	23.8
Կոռուպցիան	2.9	5.4	4.2	12.5	23.7
Առաքելական եկեղեցուց բացի՝ այլ կրոնական կազմակերպությունների տարածումը ՀՀ-ում	3.3	3.5	5.6	12.4	22.5
Ընտրությունների արդյունքների կեղծումը	3.5	4	4.6	12.1	23.1
Ցեղասպանության ճանաչման հարցը	4	4.6	3.1	11.7	24.3
Բարոյական արժեքների կորուստը	4	2.9	2.7	9.6	20.5
Բնապահպանական խնդիրները, աղտոտվածությունը	2.7	2.3	4	9	16.7
Հանցավորության բարձր մակարդակը	1.7	3.3	1.7	6.7	13.4
Ազգային ավանդույթների մոռացությունը	1.3	2.5	2.7	6.5	11.6
Տնտեսության մեջ մրցակցության բացակայությունը, մենաշնորհը	2.5	1.7	2.3	6.5	13.2
Որակյալ բուժսպասարկման մատչելիությունը	1.9	2.7	1.5	6.1	12.6
ՀՀ դիրքերի թուլացումն արտաքին քաղաքականությունում	1.5	1.3	1.9	4.7	9
Շրջափակումը	1	2.1	1	4.1	8.2
Գույքային/տնտեսական իրավունքների խախտումները	0.2	0.4	0.4	1	1.8

▪ **Նշեք, խնդրեմ, Ձեր վստահության կամ անվստահության աստիճանը հետևյալ կառույցների նկատմամբ:**

	Լիովին վստահում եմ	Ավելի շուտ վստահում եմ	Ավելի շուտ չեմ վստահում	Բոլորովին չեմ վստահում	ԴՊ
ՀՀ Նախագահ	2.5	12.9	37.3	45.4	1.9
Ազգային ժողով	2.1	14.4	39.8	42.9	0.8
Կառավարություն	2.7	16.3	37.1	43.3	0.6
Զինված ուժեր/բանակ	23.5	41.7	18.3	15.8	0.6
Ոստիկանություն	7.5	31.0	33.1	27.3	1.0
Արդարադատության համակարգ	4.2	21.7	36.3	36.3	1.7
Օմբուդսմեն	8.5	31.9	22.3	19.2	18.1
Միջազգային կազմակերպություններ	12.5	44.8	22.1	16.5	4.2

Հասարակական կազմակերպություններ	14.6	50.6	20.2	12.3	2.3
Կրոն, եկեղեցի	39.6	29.2	13.3	16.9	1.0

- **Ի՞նչ եք կարծում, ներկայումս որքանով են թափանցիկ/բաց այս կառույցները «հասարակ» քաղաքացու համար:**

	Լիովին թափանցիկ/բաց է	Ավելի շուտ թափանցիկ/բաց է	Ավելի շուտ փակ է	Բոլորովին փակ է	ԴՊ
ՀՀ Նախագահ	2.7	10.6	38.8	46.7	1.3
Ազգային ժողով	3.5	20.8	42.7	31.5	1.5
Կառավարություն	2.7	17.3	43.1	35.2	1.7
Զինված ուժեր/բանակ	7.9	29.2	35.4	26.5	1.0
Ոստիկանություն	5.2	26.7	39.2	28.1	0.8
Արդարադատության համակարգ	4.2	19.2	41.7	32.9	2.1
Օմբուդսմեն	6.7	40.4	19.4	16.3	17.3
Միջազգային կազմակերպություններ	12.1	46.3	23.3	13.3	5.0
Հասարակական կազմակերպություններ	17.5	54.2	13.3	10.6	4.4
Կրոն, եկեղեցի	38.1	34.4	11.3	13.8	2.5

- **Ինչպե՞ս կգնահատեք Հայաստանի ներքին և արտաքին քաղաքականության զարգացումները, դրանք ճի՞շտ, թե՞ սխալ ուղղությամբ են ընթանում: (%)**

	Ճիշտ ուղղությամբ	Ավելի շուտ՝ ճիշտ ուղղությամբ	Ավելի շուտ՝ սխալ ուղղությամբ	Սխալ ուղղությամբ	Զգիտեմ
Ներքին՝ սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացումներ	1.9	15.6	39.2	34.2	9.2
Արտաքին քաղաքականություն	4.2	26.5	28.5	30.4	10.4

- **Ձեր կարծիքով՝ Հայաստանի անդամակցումը/ասոցացումը հետևյալ երկու կառույցներից որի՞ն առավել նպատակահարմար կլիներ:**

	Հարցվող	%
Մաքսային միություն	232	48.3
Եվրոպական միություն	206	42.9
Զգիտեմ, այդ կառույցների մասին չեմ լսել	32	6.7

ԴՊ	10	2.1
Ընդամենը	480	100

- **Ստորև բերված պնդումներից ո՞րն է առավել լավ հիմնավորում Ձեր ընտրությունը:**
(ընտրել մեկ տարբերակ)

Մաքսային միություն	Հարցվող	%
ՀՀ տնտեսության զարգացումն ավելի մեծ հեռանկար ունի տվյալ կառույցի շրջանակներում	64	27.6
Այդ կառույցին անդամակցումն ապահովում է անվտանգության երաշխիքներ մեր երկրի համար	58	25.0
Հայաստանի աշխարհագրական դիրքն է պայմանավորում տվյալ ընտրությունը	56	24.1
Այդ կառույցի արժեքները չեն հակասում մեր ազգային մտածելակերպին	26	11.2
Մարդու իրավունքներն ավելի պաշտպանված են տվյալ միության անդամ երկրներում	21	9.1
Այլ	6	2.6
ԴՊ	1	0.4
Ընդամենը	232	100.0

Եվրոպական միություն	Հարցվող	%
Մարդու իրավունքներն ավելի պաշտպանված են տվյալ միության անդամ երկրներում	89	43.2
ՀՀ տնտեսության զարգացումն ավելի մեծ հեռանկար ունի տվյալ կառույցի շրջանակներում	62	30.1
Այդ կառույցին անդամակցումն ապահովում է անվտանգության երաշխիքներ մեր երկրի համար	25	12.1
Հայաստանի աշխարհագրական դիրքն է պայմանավորում տվյալ ընտրությունը	14	6.8
Այլ	7	3.4
Այդ կառույցի արժեքները չեն հակասում մեր ազգային մտածելակերպին	5	2.4
ԴՊ	4	1.9
Ընդամենը	206	100.0

- **Ձեր կարծիքով, ի՞նչ չափով Դուք կարող եք ազդել այն ամենի վրա, ինչ տեղի է ունենում Ձեր...(%)**

	Լիովին	զգալի չափով	աննշան չափով	բոլորովին	Չգիտեմ
քաղաքում, գյուղում, թաղամասում	7.7	41.5	36.7	13.3	0.8
Երկրում	2.7	14.0	40.0	41.0	2.1

- **Եթե հնարավորություն ունենաք, կմեկնե՞ք Հայաստանից այլ երկիր...(%)**

	միանշանակ այո	ավելի շուտ՝ այո	ավելի շուտ՝ ոչ	միանշանակ ոչ	ԴՊ
...ժամանակավոր բնակության	49.2	29.4	12.1	8.8	0.6
...մշտական բնակության	23.8	14.6	27.3	32.9	1.5

- **Ձեր կարծիքով, նշված խնդիրներից որո՞նք են ազդում մեր երկրի անվտանգության վրա**

	Ազդում է	Չի ազդում	Համաձայն չեմ	ԴՊ
1.Արտագաղթի մեծ ծավալները	89.6	9.2		1.3
2.Աղքատության/գործազրկության բարձր մակարդակը	85.2	13.5		1.3
3.Կրթության ցածր որակը/«ուղեղների արտահոսքը»	74.4	23.5		2.1
4.Բացի Առաքելական եկեղեցուց՝ այլ կրոնական կազմակերպությունների տարածումը	70.8	26.7		2.5
5.Առողջապահության ցածր որակը	70.6	27.3		2.1
6.Բնության/հանքերի անխնա շահագործումը	72.3	24.4		3.3
7.Քաղաքական շարժումները, բողոքի ակցիաները	52.3	44.4		3.3
8.Թույլ, ոչ մարտունակ բանակը	80.8	13.3	4.2	1.7
9. Համատարած կոռուպցիան	82.3	15.8		1.9

- **Երբեմն մարդկանց դուր չի գալիս այս կամ այն օրենքը, բայց նրանք ենթարկվում/հետևում են օրենքներին: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ են նրանք ենթարկվում օրենքներին
(ընտրել մեկ պատասխան)**

	Հարցվող	%
Որովհետև վախենում են պատժվելուց	244	50.8
Վախենում են մարդկանց և հասարակության կողմից քննադատվելուց	74	15.4
Կարծում են, որ եթե բոլորը խախտեն օրենքները, կյանքը վտանգավոր կդառնա	56	11.7
Որովհետև ընդունված չէ խախտել օրենքը	41	8.5

Որովհետև հարգում են օրենքը	40	8.3
Այլ	21	4.4
ԴՊ	4	0.8
Ընդամենը	480	100.0

- **Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ են մարդկանց պատասխանատվության ենթարկում իրավական նորմերը/օրենքները խախտելու համար (ընտրել մեկ պատասխան)**

	Հարցվող	%
Պատիժը նախազգուշացում է մյուսների համար	122	25.4
Պատիժը վերադաստիարակում է օրինախախտին	104	21.7
Մարդկանց մոտ օրենքի նկատմամբ հարգանք դաստիարակելու համար	100	20.8
Պատիժը մեխանիզմ է օրինախախտներից այլոց պաշտպանելու համար	91	19.0
Ուրիշներին պատժելով՝ մարդիկ ուզում են ցույց տալ, որ իրենք հարգում են օրենքները	51	10.6
Այլ	9	1.9
ԴՊ	3	0.6
Ընդամենը	480	100.0

- **Ըստ Ձեզ, ո՞վ պետք է երաշխավորի մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը (ընտրել մեկ պատասխան)**

	Հարցվող	%
Պետությունը	174	36.3
Մարդն՝ ինքը	116	24.2
Մարդու իրավունքների պաշտպանը	93	19.4
Երկրի նախագահը	44	9.2
Կառավարությունը	35	7.3
Տեղական ինքնակառավարման մարմինները	4	0.8
Եկեղեցին	2	0.4
Այլ	7	1.5
ԴՊ	5	1.0
Ընդամենը	480	100.0

▪ **Ստորև թվարկված մարդու իրավունքներից որո՞նք են առավել հաճախ խախտվում Հայաստանում**

(նշել առավելագույնը 3 պատասխան)

	Հարցվող	%
Արդար դատաքննության իրավունք. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:	278	57.9
Խոսքի ազատության իրավունք. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք, արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվել իր կարծիքից կամ փոխել այն:	239	49.8
Խոշտանգումների չենթարկվելու իրավունք. Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ձերբակալված, կալանավորված և ազատազրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի եւ արժանապատվության հարգման իրավունք:	137	28.5
Հավաքների և միավորումների ազատության իրավունք. Յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու և դրանց անդամագրվելու իրավունք: Մարդուն չի կարելի հարկադրել անդամագրվել որևէ կուսակցության կամ միավորման: Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք:	100	20.8
Կյանքի իրավունք. Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի:	86	17.9
Ստքի, խղճի, կրոնի ազատության իրավունք. Յուրաքանչյուր ոք ունի կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատություն և դրանք, ինչպես միայնակ, այնպես էլ՝ այլոց հետ համատեղ քարոզելու ազատություն:	81	16.9
Ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք. Յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի տարածքում ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու, ինչպես նաև երկրից դուրս գալու իրավունք	59	12.3
Մեր երկրում մարդու ոչ մի իրավունք չի խախտվում	21	4.4
ԴՊ	1	0.2
Ընդամենը	480	100.0

▪ **Ձեզ օրենքով պաշտպանված զգո՞ւմ եք:**

	Հարցվող	%
Ավելի շուտ՝ ոչ	185	38.5

Ավելի շուտ՝ այո	159	33.1
Բոլորովին ոչ	91	19.0
Միանգամայն այո	41	8.5
ԴՊ	4	0.8
Ընդամենը	480	100.0

- **Արտահայտեք Ձեր համաձայնությունը կամ անհամաձայնությունը հետևյալ դատողությունների հետ:**

	Համաձայն եմ	Համաձայն չեմ	ԴՊ
Կան դեպքեր, իրավիճակներ, երբ մարդու որոշ իրավունքներ և ազատություններ կարող են սահմանափակվել	75.4	24.4	0.2
Մարդու իրավունքները երբեք, որևէ պատճառով չպետք է սահմանափակվեն պետության կողմից	24.8	74.4	0.8
Եթե ես պետության կողմից ապահովված լինեմ բարձր աշխատավարձով, ապա ես պատրաստ եմ հրաժարվել իմ որոշ իրավունքներից	11.5	82.5	6.0

- **Ըստ Ձեզ, ո՞ր դեպքերում է թույլատրելի մարդու որոշ իրավունքների սահմանափակումը (նշել այնքան պատասխան, որքան անհրաժեշտ էք համարում)**

	Հարցվող	%
Ռազմական գործողությունների ժամանակ	238	49.6
Արտակարգ դրության ժամանակ	228	47.5
Քաղաքացիների անվտանգությունն ապահովելու համար	176	36.7
Կարգուկանոն և կայունություն պահպանելու համար	144	30
Հանցագործությունների հետաքննության ժամանակ	113	23.5
Մարդու իրավունքները չեն կարող սահմանափակվել ոչ մի դեպքում	111	23.1
Եթե դա հարկավոր է այլ մարդու իրավունքները պաշտպանելու համար	87	18.1
Մարդկանց տնտեսական վիճակը լավացնելու համար	49	10.2

▪ **Դուք ծառայե՞լ եք ՀՀ զինված ուժերում**

	Հարցվող	%
Այո	118	53.9
Ոչ	101	46.1
Ընդամենը	219	100.0

▪ **Եթե հնարավոր լիներ ընտրություն կատարել՝ ծառայել ՀՀ բանակում, կամ ոչ, ո՞ր տարբերակը կընտրեիք:** (իզական սեռի դեպքում՝ եղբայրների, մտերիմ ընկերների համար պատասխանել)

	%
Միանշանակ կծառայեի	47.1
Ավելի շուտ կծառայեի	18.5
Ավելի շուտ չեի ծառայի	11.7
Միանշանակ չեի ծառայի	22.1
ԴՊ	0.6

▪ **Ինչպե՞ս կհիմնավորեք բանակում ծառայելու անհրաժեշտությունը:**
(ընտրել մեկ պատասխան)

	Հարցվող	%
Պետության անվտանգությունն ապահովելու համար	133	36.2

Սեփական ընտանիքի և հարազատների անվտանգությունը պաշտպանելու համար	87	23.7
Բանակում տղաներն ինքնահաստատվում են, դառնում ինքնուրույն	73	19.9
Բանակում ծառայելը տղաների պարտականությունն/պարտքն է	39	10.6
Բանակի հզորացման համար	23	6.3
Բանակում մնալու և ծառայությունը որպես աշխատանք շարունակելու համար	6	1.6
Այլ	6	1.6
Ընդամենը	367	100.0

▪ **Ինչպե՞ս կհիմնավորեք բանակում ծառայելու անցանկալի լինելը:**
(ընտրել մեկ պատասխան)

	Հարցվող	%
Բանակում ծառայողների անվտանգությունն ապահովված չէ	117	37.3
Բանակում հարցերը կարգավորվում են ծանոթ/բարեկամների/փողի միջոցով	52	16.6
Ժամանակի անհիմաստ վատնում է	45	14.3
Բանակում չկա կարգապահություն	32	10.2
Բանակում զինվորները ենթարկվում են ֆիզիկական բռնության և բարոյական նվաստացման	32	10.2
Ծառայողների համար ապահովված չեն անհրաժեշտ նվազագույն պայմաններ	19	6.1
Այլ	17	5.4
Ընդամենը	314	100.0

▪ **Բանակի ձևավորման վերաբերյալ հետևյալ դատողություններից որի՞ հետ եք համաձայն:**

	Հարցվող	%
Հայաստանում պետք է պահպանել պարտադիր զինվորական ծառայությունը	292	60.8
Հայաստանը պետք է անցնի պայմանագրային հիմունքներով բանակի ձևավորմանը	178	37.1
Դ՛ր	10	2.1
Ընդամենը	480	100.0

- **Ձեր կարծիքով, ի՞նչ է այսօր առաջին հերթին անհրաժեշտ ՀՀ բանակը հզորացնելու համար:**

	Հարցվող	%
Համալրել ժամանակակից սպառազինություններով	132	27.5
Բարձրացնել կարգապահությունը	119	24.8
Հայրենասիրական ոգի դաստիարակել	105	21.9
Հարգել մարդու իրավունքները և ազատությունները	86	17.9
Մեծացնել ծառայողների թիվը/քանակը	27	5.6
Այլ	9	1.9
ԴՊ	2	0.4
Ընդամենը	480	100.0

- **Արտահայտեք Ձեր համաձայնության կամ անհամաձայնության աստիճանը հետևյալ դատողությունների հետ: (նշում կատարելով համապատասխան վանդակում)**

	Լիովին համաձայն եմ	Որոշ չափով համաձայն եմ	Որոշ չափով համաձայն չեմ	Բոլորովին համաձայն չեմ	ԴՊ
Հայաստանն ունի ամենամարտունակ բանակը Հարավային Կովկասում	18.3	42.7	21.7	14.0	3.3
Ղարաբաղի հիմնահարցի չլուծված լինելը խոչընդոտում է ՀՀ տնտեսության զարգացմանը	32.7	36.3	19.4	9.4	2.3
Բանակին և սպառազինություններին ուղղվող պետական միջոցները պետք է ամեն տարի ավելացվեն	52.5	28.3	11.7	4.2	3.3
Ադրբեջանի հետ պատերազմը կարող է ցանկացած պահի վերսկսվել	47.7	33.8	10.4	6.0	2.1
ՀՀ բանակում առկա խնդիրները և միջադեպերը չափսի բարձրաձայնվեն, քանի որ դա բացասաբար է ազդում բանակի հեղինակության վրա	24.8	25.4	20.6	27.7	1.5
Բանակում ծառայող սպայական կազմին պետք է տրվեն զգալի սոցիալական արտոնություններ (բնակարան, բարձր աշխատավարձ/թոշակ)	39.6	35.0	12.9	10.8	1.7
Հայաստանի աշխարհագրական դիրքն այնպիսին է, որ նաև կանայք պետք է սովորեն զենք գործածել	26.9	35.4	17.7	19.0	1.0
Հայաստանի նման փոքր երկրների անվտանգությունը պետք է երաշխավորվի և ապահովվի այլ՝ հզոր երկրների կողմից	25.4	37.5	19.0	16.7	1.5

- **Ի՞նչ եք կարծում, Հայաստանն ունի՞ այսօր ռազմական սպառնալիք այլ երկրների կողմից, թե՛ ոչ:**

	Հարցվող	%
Միանշանակ ունի	306	63.8
Ավելի շուտ՝ ունի	135	28.1
Ավելի շուտ՝ չունի	24	5.0
Միանշանակ չունի	10	2.1
ԴՊ	5	1.0
Ընդամենը	480	100.0

- **Եթե այո, ապա ո՞ր երկրի կամ երկրների կողմից:**

	Հարցվող	%
Ադրբեջան	390	81.3
Թուրքիա	138	28.7
Ռուսաստան	30	6.3
Վրաստան	7	1,5
ԱՄՆ	7	1,5
Այլ	8	1,7

- **Ի՞նչ եք կարծում, մեր բանակն ի վիճակի՞ է երկիրը պաշտպանել այլ երկրների կողմից ռազմական սպառնալիքի դեպքում:**

	Հարցվող	%
Ավելի շուտ՝ կարող է	244	50.8
Միանշանակ կարող է	134	27.9
Ավելի շուտ՝ չի կարող	70	14.6
Միանշանակ չի կարող	23	4.8
ԴՊ	9	1.9
Ընդամենը	480	100.0

▪ **Ձեր կարծիքով, որքանով է հավանական Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորումը... (%)**

	Հավանականություն չկա	Քիչ հավանական է	Հավանական է	Շատ հավանական է	ԴՊ
...խաղաղ ճանապարհով	16.3	51.5	25.2	5.0	2.1
...ուժային ճանապարհով	9.8	30.8	41.9	12.5	5.0

▪ **Ձեր կարծիքով, ե՞րբ կլուծվի Ղարաբաղի հիմնահարցը:**

	Հարցվող	%
ԴՊ	123	25.6
մոտակա 5-10 տարվա ընթացքում	94	19.6
ավելի քան 10 տարում	90	18.8
երբեք չի լուծվի	84	17.5
առաջիկա 5 տարում	69	14.4
այն արդեն իսկ լուծված է	20	4.2
Ընդամենը	480	100.0

▪ **Ձեր կարծիքով, Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման նպատակով արդյո՞ք ընդունելի է հայկական զորքերի վերահսկողության տակ գտնվող որոշ տարածքների հանձնումը Ադրբեջանին՝ բացի Ղարաբաղից:**

	Հարցվող	%
Միանշանակ ընդունելի չէ	332	69.2
Ավելի շուտ՝ ընդունելի չէ	101	21.0
Ավելի շուտ՝ ընդունելի է	25	5.2
Միանշանակ ընդունելի է	13	2.7
ԴՊ	9	1.9
Ընդամենը	480	100.0

- **Ըստ Ձեզ, ինչպիսի՞ն պետք է լինի պետության մոտեցումը քաղաքացիների բարեկեցության ապահովման հարցում: Պետությունը պետք է...**

	%
...ապահովի/երաշխավորի հավասար հնարավորություններ քաղաքացիների բարեկեցության համար	60.2
...ապահովի հավասար բարեկեցություն քաղաքացիների համար	38.7
Այլ	0.2
ԴՊ	0.8

- **Ինչպե՞ս պետք է գործի պետությունը աշխատանքի և զբաղվածության ոլորտում: (ընտրել մեկ պատասխան)**

	%
Ապահովել բոլորին աշխատանքով՝ ցածր աշխատավարձով և չնչին տարբերությամբ	45.8
Աշխատանքի շուկան ամբողջովին ազատ թողնել, առանց աշխատանքի տեղավորման և վարձատրության երաշխիքների	40.4
Այլ	7.9
ԴՊ	5.8

- **Ըստ Ձեզ, ինչպիսի՞ն պետք է լինի պետության մոտեցումը քաղաքացիների անվտանգության ապահովման հարցում: (ընտրել մեկ պատասխան)**

	%
Պետությունը պետք է ապահովի քաղաքացիների անվտանգությունը՝ որևէ կերպ չսահմանափակելով նրանց իրավունքները	60.2
Մարդիկ/քաղաքացիները պետք է պատրաստ լինեն պետության կողմից մարդու իրավունքների որոշ սահմանափակումների իրենց անվտանգության նպատակով	35.4
Այլ	0.2
ԴՊ	4.1

▪ **Ձեր կարծիքով, «լավ քաղաքացին, նա է, ով...» (%)**

	Շատ կարևոր է	Ավելի շուտ կարևոր է	Ավելի շուտ կարևոր չէ	Բոլորովին կարևոր չէ	ԴՊ
...միշտ հետևում է օրենքներին	31.0	45.6	16.9	6.0	0.4
...աջակցում է կառավարության բոլոր նախաձեռնություններին	9.6	33.8	33.3	21.3	2.1
...մասնակցում է ընտրություններին	44.2	34.4	12.9	8.1	0.4
...ծառայում է բանակում	49.0	27.9	16.3	5.4	1.5
...պահպանում է ազգային ավանդույթները	42.5	28.1	17.3	11.3	0.8
...քննադատաբար է մոտենում կառավարության գործունեությանը	17.9	27.3	34.0	16.7	4.2
...կատարում է կամավորական աշխատանք իր համայնքի համար	37.5	39.0	12.7	9.6	1.3

▪ **Արտահայտեք Ձեր համաձայնության կամ անհամաձայնության աստիճանը հետևյալ դատողություններին**

	Համաձայն եմ	Համաձայն չեմ	ԴՊ
Քաղաքացիները պետք է մասնակցեն բողոքի ակցիաներին և ցույցերին, քանի որ դա զգոն է պահում կառավարությանը	79.4	17.7	2.9
Քաղաքացիները չպետք է մասնակցեն խաղաղ բողոքի ակցիաներին և ցույցերին, քանի որ դա բերում է երկրի անկայունության	15.6	80.6	3.8

▪ **Կան իրավիճակներ երկրի կյանքում, երբ մարդկանց պետք է ուժեղ եւ հեղինակավոր առաջնորդ, «ուժեղ ձեռք»: Հետևյալ դատողություններից ընտրեք մեկը, որն ավելի մոտ է ձեր ընկալմանը:**

	%
Մեր ժողովրդին միշտ էլ պետք է «ուժեղ ձեռք»	38.3
Լինում են իրավիճակներ, երբ պետք է կենտրոնացնել իշխանությունը մեկ մարդու ձեռքում	19.6
Ոչ մի դեպքում չի կարելի թույլ տալ, որ իշխանությունը կենտրոնացվի մեկ մարդու ձեռքում	37.7
ԴՊ	4.4

▪ **Դեմոգրաֆիական տվյալներ**

ա/ Սեռ

	Հարցվող	%
իգական	267	55.6
արական	213	44.4
Ընդամենը	480	100.0

բ/ Տարիք

	%
18	13.7
19	9.6
20	9.4
21	11.7
22	15.6
23	15
24	8.7
25	16.2
Ընդամենը	100%

գ/ Մշտական բնակավայր (մարզ/քաղաք/գյուղ)

	Հարցվող	%
Երևան	160	33.3
Վանաձոր	40	8.3
Իջևան	40	8.3
Գավառ	40	8.3
Գորիս	40	8.3
Շինուհայր	40	8.3
Մարգահովիտ	31	6.5
Նորատուս	25	5.2
Աչաջուր	19	4.0
Գանձակ	15	3.1
Սևքար	13	2.7

Սարալ	9	1.9
Սարիգյուղ	8	1.7
Ընդամենը	480	100.0

▪ **Կրթություն**

	Հարցվող	%
Թերի միջնակարգ (1-8 դասարան)	3	0.6
Միջնակարգ (10-12 դասարան)	98	20.4
Միջին մասնագիտական	43	9.0
Թերի բարձրագույն (ուսանող)	123	25.6
Բարձրագույն (բակալավր, մագիստրոս)	212	44.2
Ասպիրանտ	1	0.2
Ընդամենը	480	100.0